

ԱՄԵՐԻԿԱ

Հայաստան

Պաշտոնաթերթ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԳՈՒԹԵԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, 2025

Թ. Տարի, թիւ 40 (445) (Նոր Շրջան), Հիմնում 1899-ին, իբրեւ «Զայն Հայրենեաց»

ԿՈՉ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆՈՐ ԵՒ ՄՏԱՀՈԳԻՉ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԼՈՒՐՉ Ե ԿԱՑՈՒԹԻՒՆԸ. ՊԵՏՔ Ե ԱԶԳՈՎԻՆ ԼՐՁԱՆԱԼ

Դարատր թշնամիներու հետ ձեռական հաշտութիւնները չափազանց փխրուն են և դիւրաբեկ եթէ չմիատրեմք եւ չամրացնենք մեր ժողովուրդին բովանդակ մերուժը:

Իրավիճակը ընդվզեցուցիչ է այլեւս, իշխանութիւնները պէտք է դադարեցնեն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ հոգեւորականներուն՝ որոնց ընդմէջէն, Մայր Աթոռին դէմ ներկայիս շղթայազերծուած՝ մեր ժողովուրդի պատմութեան մէջ իր տարողութեամբ անմասնադիւր եւ անընդունելի գրոհը:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր կարգին պարտի դուրս մնալ ներքին քաղաքական վեճերէն եւ հաւատացեալները աւելի եւս մղել քարոյապէս նեցուկ կանգնելու Հայոց Պետականութեան:

Իշխանութիւնները իրենց հերքին, պարտին առաջնահերթութիւն սեպել ներքին համերաշխութիւնը ամրապնդել ինչպէս նաեւ կրկնապատկել Հայոց Բանակին ռազմական կարողութիւնները, անկախ կնքուած կամ կնքուելիք՝ սոսկ թուրքի վրայ գրուած դիւրաբեկ համաձայնագրերէն:

Իշխանութիւնները պարտին կազմակերպել եւ իմաստաւորել Սփիւռքի կարողականութիւններէն լաւագոյնս օգտուելու աշխատանքը, յօգուտ Հայրենիքին:

Սփիւռքը իր կարգին պարտի աշխարհատարած իր ներկայութիւնը նպատակաւարձաբար կերպով ծառայեցնել միջազգային ընտանիքի մօտ հայանպաստ եւ Հայաստանամէտ դիրքորոշումներ յառաջացնելու համար:

ՀՀ Իշխանութիւններ, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ օժեալ եւ նուիրեալ հայրեր, Հայաստանաբնակ հայեր եւ Սփիւռքահայութիւն. Մեր Հայրենիքին ու ժողովուրդին դիմագրաւած այս անմասնադիւր դէպքին դժուար օրերուն, մեր ջրածներուն եւ չըրածներուն համար, բոլորս հաշտուեալ ենք Աստուծոյ եւ պատմութեան առջեւ՝ Այսօր եւ Այագային:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԳՈՒԹԵԱՆ
ՀԱՍՏԱԴՐՈՒՄԸ ՄԱՍՈՒԼ

17 Հոկտեմբեր 2025



ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ Ե ՄԵՐՁԱԴՈՐ ԱՐԵՒԵԼԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի եւ Եգիպտոսի նախագահ Ապտալ Ֆաթթահ Միսիի հրաւերով Շարմ Էլ Շէյխի մէջ մասնակցած է Մերձավոր Արեւելքի Խաղաղութեան գագաթաժողովին: Տեղին է նշել, որ սոյն գագաթաժողովին ներկայ գտնուած է նաեւ Գանատայի վարչապետ Մարք Գարնի:




Եգիպտոսի նախագահ Միսիին դիմաւորած եւ ողջունած է գագաթաժողովի մասնակիցները:

Գագաթաժողովի ընթացքին, տեղի ունեցած է մասնակից պետութիւններու ղեկավարներու համատեղ տեսալուսանկարահանման արարողութիւն:

Գագաթաժողովի ծիրին մէջ ստորագրուած է Կազայի մէջ պատերազմի աւարտի վերաբերեալ համաձայնագիր, որ ստորագրած են Եգիպտոսի նախագահ Ապտալ Ֆաթթահ Միսիին, ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփը, Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանը եւ Քաթարի վարչապետ Մոհամմատ պըն Ապտալ Բին Ֆահմին:

Խաղաղութեան պայմանագրի ստորագրման արարողութենէն ետք ԱՄՆ եւ Եգիպտոսի նախագահները հանդէս եկած են յայտարարութիւններով:



ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբերի 15, 2025 | Նիւ Եորք

Մենք՝ Հիւսիսային Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդները՝ Արևմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տերտրեանը, Արևելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մեսրոպ Եպիսկոպոս Պարսամեանը եւ Գանատահայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Արգար Եպիսկոպոս Յովակիմեանը, մեր խոր մտահոգութիւնը կը յայտնենք Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղի ունեցած վերջին ձեռքարկութիւններուն կապակցութեամբ:

Ձեռքարկուածներու մէջ են Արագածոտնի Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մկրտիչ Եպիսկոպոս Պողոսեանը, ինչպէս նաեւ քանի մը քահանաներ եւ թեմական վարչութեան աշխատակիցներ:

Ձեռքարկուած հոգեւորականները ճանչցուած են իրենց նուիրումով, խոնարհութեամբ եւ ժողովուրդին ու Աւետարանին ծառայութեամբ: Նման վերաբերմունքը վտանգի տակ կը դնէ մեր ազգի քարոյական ու հոգեւոր հիմքերը եւ կը խաթարէ Եկեղեցւոյ սրբազան դերը մեր ազգային կեանքին մէջ:

Մեր կողմ կ'ուղղենք Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն՝ ապահովելու արդարութիւն, թափանցիկութիւն եւ օրէնքի պատշաճ ընթացք, եւ յարգելու Հայ Եկեղեցւոյ պատմական անկախութիւնն ու սրբազան առաքելութիւնը:

Այս դժուարին պահուն մենք միասնաբար կը կանգնինք Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի, մեր հոգեւորականութեան եւ բոլոր հաւատացեալներու կողքին՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Կը հրաւիրենք մեր համայնքները միասնական աղօթքի՝ իմաստութեան, խաղաղութեան եւ մեր հայրենիքին մէջ վստահութեան ու միաբանութեան վերականգնման համար:

Յովնան Արքեպիսկոպոս Տերտրեան
Առաջնորդ ԱՄՆ Արեւմտեան Թեմի

Մեսրոպ Եպիսկոպոս Պարսամեան
Առաջնորդ ԱՄՆ Արևելեան Թեմի

Արգար Եպիսկոպոս Յովակիմեան
Առաջնորդ Գանատահայոց Թեմի

ՄԻՐՉՈՅԵԱՆ. «ՅՈՅՍ ՌԵՒԻՄ ՅԱՌԱՋԻԿԱՅԻՆ ԳԵՐԻՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԼԱՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Կ'ՈՒՆԵՆԱՆՔ»

Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան 14 Հոկտեմբերին ընդունած է ԵԱՀԿ-ի ներկայ շրջանի նախագահ Էլինա Վալթոնինը: Տեսակցութեան աւարտին տեղի ունեցած միացեալ մամուլի ասուլիսի ընթացքին Միրզոյեան յայտարարած է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրին նախաստորագրումէն ետք՝ մնացած չլուծուած հարցերէն առաջնայինը Պաքոյի մէջ պատանդ պահուող հայերու ազատ արձակումն է:



«Յոյս ունիմ» յառաջիկային գերիներուն վերաբերեալ լաւ նորութիւններ կ'ունենանք», ըսած է ան՝ աւելցնելով, որ հարցը քննարկած է ատրպէյճանցի իր պաշտօնակիցներուն հետ՝ նոյնիսկ Շարմ Էլ Շէյխի վեհաժողովի շրջանակին մէջ: «Մենք ամենօրեայ աշխատանք կը տանինք այս ուղղութեամբ», հաստատած է նախարարը:

Սահմանադրութիւնը փոխելու Ատրպէյճանի պահանջը

Նոյն մամուլի ասուլիսին, Արտաքին գործոց նախարարը անդրադառնալով Հայաստանի Սահմանադրութիւնը փոխելու Ատրպէյճանի պահանջին՝ ընդգրծած է, որ երկկողմ քննարկումներուն մէջ այդպիսի հարց գոյութիւն չունի:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ՎԱՅՐԻ ԿՃՂԱԿՆԵՐԸ ԵՐԿԱՐ ՉԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՒՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Ֆրանսուազ Սականն է ասել՝ յիմարութիւնը միշտ չէ, որ մարդուն չարացնում է, բայց չարութիւնը մարդուն միշտ յիմարեցնում է: Ես էլ աւելացնեմ, որ անյաջողութիւնը սովորաբար ժամանակաւոր է լինում, սակայն եթէ յանձնում ես, այն դարձնում ես մշտական:

Այսօր վաղ արթնացայ եւ թարմ ուղեղով՝ դառը սուրճի հետ սկսեցի մտորել: Վերջերս քնելուց առաջ դիտում եմ Տոյչէ Վելլէի, Պի.Պի.Սի.-ի կամ ռուս «իննագենտների» օտարերկրեայ գործակալների» փոստագրական ֆիլմերն ու *ռեպորտաժները*՝ Փիվովարով, Վառլամով, Տուդ: Այս անգամ դիտեցի Ղազախըստանի մասին երկուսուկէս ժամանոց *ռեպորտաժ*: Շատ բան էր ուսանելի եւ հետաքրքրական՝ սկսած ղազախների պատմութիւնից մինչեւ Ղազախստանի Խորհրդային եւ անկախ Հանրապետութիւնը, 1930-ական թուականների սովը, կուլակաթափութիւնը, այլ ժողովուրդների աքսորը դէպի ցուրտ Ղազախըստան: Պարզում է՝ 1991 թուականից ի վեր հարեան հանրապետութիւններից, առաջին հերթին՝ Ուզպեքիստանից եւ Ռուսաստանից, Ղազախստան է վերադարձել մէկ միլիոն հարիւր երեսուն հազար ղախագից: Հայրենիք վերադարձողներին անուանում են ուրալման կամ կանդաս: Պետութիւնը նրանց հող է տրամադրում, գրոյից կառուցում են նոր գիւղեր ու ավաններ, նրանց սովորեցնում են ղազախերէն, գործով ապահովում: Այս մասին ես չգիտէի: Ակամայ մտածում եմ՝ ի՞նչն էր խանգարում կամ այսօր ի՞նչն է խանգարում, որ նոյնն անի Հայաստանը: Հող չունե՞նք: Ունենք, մեր հողերի կէսից ատելին չի մշակում: Աշխարհի տարբեր անկիւններում ապրող հայերի զոմէ մի կտորը չի՞ ուզում վերադառնալ Հայաստան, յատկապէս Հայաստանից արտագաղթածներն ու խորհրդային հանրապետութիւններում հաստատուածները: Սակայն հարց է, իսկ պետական մման ծրագիր ունե՞նք, ինչպէս ղազախները: Կամ ի՞նչ ենք անում, որ Արցախի հայութիւնը հաստատուի հայրենիքում:



Ղազախները լուռ իրականացրել են ատելի քան մէկ միլիոն հայրենակիցների վերադարձը, ինտեգրումն ու հաստատումը հայրենի հողի վրայ, իսկ մե՞նք: Ոչ մի ազգ իր մէջ այսքան անուղեղ, անձնական շահերով առաջնորդուող, տրամաբանութիւնից զուրկ, թացը չորից չտարբերող, լաւն ու վատը չբացայայտող բիո-զանգուած չունի: Ամեն փալմբոս խարդախ (էլ չգիտեմ ինչպէս կոչեմ էդ նորելուկ «ամենագէտներին») հաքաթայ է տալիս շատերին ու ինչ ասես, ասում: Անընդհատ խօսում են նախկիններից ու նրանց կոռուպցիոն գումարներից: Մոռանում են, որ ամեն տարի չորս միլիարդով

աւել հարկ է հաւաքուել, գումարած պետական պարտքն է կրկնապատկուել: Ու՞ր են այդ գումարները: Տարեկան 5 միլիարդից ատել փող է կորել, այսինքն 5x7=35միլիարդ, ո՞վ է կերել, ի՞նչն է լաւացել, ի՞նչն է փոխուել: Ընդհակառակը արւում է այնպէս, որ մնացածներն էլ մի կերպ մագապուրծ լինեն, հեռանան Հայաստանից:

Ամեն թույլ թքկահարւում է, որ խաղաղութիւն է բերուել, իսկ իրականում խաղաղութեան *իմիտացիա* (արհեստական մմանակում) է խաղացւում: Այժմ ՀՀ-ում առաջիկայ ընտրութիւններին նախապատրաստուող նոր քաղաքական հոսանքներ, շարժումներ, կուսակցութիւններ եւ անհատներ են ձեւաւորում եւ այդ ամէնն ընդամենը 3 միլիոն բնակչութիւն ունեցող երկրում են: Դա խօսում է այն մասին, որ ոչինչ չի փոխուելու մեր երկրում, ոչինչ դէպի լաւ չի գնալու: Ուղղակի «Ալին» է փոխուելու «Վալիով» կամ «ապագան» է փոխուելու «առաջընթացով»: Իրականում ամէն ինչ նոյնն է մնալու: Յաւօք, սա է մեր ազգը, որին ինչ-ինչ ուժեր միշտ էլ առաջնորդելու են որսեղ որ իրենց պէտք է: Աստուած թող ների, բայց վերջերս յաճախ եմ մտորում, թէ Եռաբլուրի հողերը վաճառելու համար ինչու՞ են այսպէս կրքոտ մեղադրում նախկին իշխանութիւններին, գուցէ այդ հողերը նրանց պէ՞տք են՝ առաջիկայ նոր պատերազմից յետոյ էլ ատելի մեծացնելու գոհուածներին տրամադրուող տարածքները, միգուցէ Եռաբլուրի տարածքային աճը երեք անգամ դեռեւս քի՞չ է ...:

Ըստ տարիքի՝ Մարդու միտքն ատելի երկար ու խորն է գործում, թէւ տարիքի հետ նաեւ գլխաւոր հարցը առողջական վիճակն է դառնում: Յստակ է, որ Մարդն ապրում է մի բարի հետք թողնելու համար: Օրինակ՝ իմ կապիտալը գիրք գրելն է: Թէեւ գիտեմ, որ հիմա գիրք կարդացող էլ չկայ, որ մեծ մասի նպատակը՝ օրինական ու անօրինական ճանապարհներով, հարստութիւն դիզելն է: Գիտեմ նաեւ, որ այս տեսակ իրավիճակներ էլի են եղել, բայց յաղթահարուել են, քանզի հայ մարդն առանց գիր ու գրքի շնչահեղձ կլինի... համոզւած եմ, որ անտաղանդ մարդիկ չկան, այլ կան մարդկանց աշխատասէր, նպատակասլաց եւ ծոյլ ու նվնուան տեսակներ: Որ առաջինները քաղում են հիւքալի պտուղը, իսկ երկրորդների ծառն անդարձ չորանում է: Որ կայ մի ուրիշ մարմին, որ ատելի ու ատելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը Հայրենիքն է: Կայ ճանապարհ, որ բոլորիս համար մէկն է, դա Հայրենիք բերող ճանապարհն է, սա պէտք է լինի բոլորիս գերագոյն նպատակը: Որ կեանքում գործում է *բունեքանգի* օրէնքը: Պարտադիր չէ, որ բոլորն այն տեսնեն, սակայն անկախ ամէն ինչից, պատասխանը չի ուշանում եւ հատուցումը

միշտ կը լինի:

Հարկաւոր է ըմբռնենք, որ կեանքում միակ կանոնը, որով պէտք է ապրենք, բոլոր իրավիճակներում մարդ մնալն է: Որ ամենամեծ խոչընդոտը վախն է, ամենամեծ սխալը՝ ոգով ընկնելն է: Ամենավտանգաւոր մարդը ստախօսն է, առաւել ստոր զգացողութիւնը նախանձն է: Ամենագեղեցիկ արարքը՝ ներելը, իսկ լաւագոյն պաշտպանութիւնը ժպիտն է: Ամենահզօր ուժը հաւատն է, իսկ լաւագոյն աջակցութիւնը Յոյսն է: Վերջապէս գիտակցենք, որ Աստծոյ մեծագոյն նուէրը Մերն է:

XIX դարի բրիտանացի քաղաքական տնտեսագէտ, փիլիսոփայ Փոն Սքիվարթ Միլն իրաւացիօրէն հարցնում էր, թէ ինչպէ՞ս կարող են մեծ մտքեր ծնուել մի երկրում, որտեղ մեծ մտքի չափանիշը փոքր մտքերի, կարծիքների հետ համաձայնութիւնն է: Կարծես մերօրեայ իրականութեան մասին լինի, քանզի երբ նայում ես այսօրուայ հայ հասարակութեանը, հասկանում ես, որ ամենեւին մտահոգուած չեն, ոչ մի ցաւ չեն ապրում 2020 թ. պատերազմի, 2023 թ. Արցախի հայաթափման, ներկայ դժուարին՝ երկիրը վտանգուած լինելու վիճակի համար եւ անդարդ ապրում են: Ակամայ յիշեցի, որ տարիներ առաջ կարծրացած մտածողութիւն կար՝ թէ ժողովուրդն ազատագրուած տարածքները հետ վերադարձնելու հարցում չի համաձայնի: Արցախի հարցում էլ այն կարծիքն էր իշխում, որ արցախահայերը երբեք չեն համաձայնի Արցախը յանձնելու: Բայց այսօր հասանք առաջին հայեացքից անհնարին՝ Արցախի դատարկմանը: Բայց հիմա նայում եմ, ու տեսնում որ կարծես ոչինչ չի եղել: Կարծես Հայաստանում չենք ապրում: Կարծես դա մեզ հետ չի եղել: Կարծես Արցախը մերը չէր, Արցախի հայը մերը չի: Բայց անտարբեր ենք նաեւ Հայաստանի հարցում: Ոչ մի թուրքական վտանգ չենք տեսնում, ատելին, շատերն այն կարծիքին են, որ կարող ենք լեզու գնել նրանց հետ, հաշտուել: Եւ դրա համար ընդամենը մի բան է պէտք՝ այստեղից վտարել ռուսներին: Այսինքն ստացում է, որ ռուսները եթէ չլինեն, մենք թուրքերի հետ լաւ էլ կ'ապրենք: Պատմաբանիս դիտակէտից ուղղակի ապշում եմ եւ չեմ հաւատում այդ իրողութեանը, յիշողութեան կորստին, բայց ցաւօք դա այդպէս է:

Եւ դա այն դէպքում, երբ օտարները, օրինակ՝ ռուս լրագրող հրապարակախօս, մի շարք միջազգային հեղինակաւոր մրցանակների դափնեկիր Պորիս Պուրտան անթաքոյց յայտարարում է, որ Աշխարհն ատելի լաւ հասկանալու համար պէտք է ատելի ուշադիր նայել Հայաստանին: Նա գրում է, որ Հայաստանի պատմութեան արմատները հասնում են մինչեւ այն ժամանակները, երբ, գուցէ, նոյնիսկ հրեաները կենդանիների մորթի էին կրում: Իսկ հայկական խոհանոցի մասին ասում է, որ Հայկական խոհանոցը չինականի պէս հին է, իտալականի պէս՝ բազմաբնոյթ եւ հզօր միջերկրածովի պէս՝ հաւասարակշռւած: Ես միշտ զարմանում էի,- գրում է նա,-ինչպէս կարելի է իրականութիւն դարձնել շինարարի, պոետի, ճարտարապետի, նախագծողի եւ նոյնիսկ բալետի պարուհու հմտութիւնները սովորական խոհարարութեան մէջ: Բայց այս ամէնը կարելի է տեսնել, հետեւելով, թէ ինչպէս են 5-6 կանայք պատրաստում հայկական լաւաշը: Մեր երկրով հիացած մտաւորականն այնուհետեւ յոյս է յայտնում, որ «Հայաստանի բազմաթիւ հրաշալի թանգարանների շարքում մի օր անպայման կը տեսնի հայկական խոհանոցի թանգարանը»: Իսկ Հայկական մշակոյթը նրա կարծիքով շատ մեծ թուով երկրների մշակոյթներում շատ խորը արմատներով կախուած ծառ է, որից այն շատ բան է վերցրել եւ, չնոռանամ, շատ բան է տուել: Հայոց պատմութիւնն ու մշակոյթն ըստ այդ հեղինակի, ամէն ինչ ունի. ժամանակակից բոլոր խնդիրներն արդէն այցելել են Հայաստան III-IV դարերում: Ասումը հիմնաւորելու համար Պուրտան նշում է, որ Գառնիում գտնուելու ընթացքում, մօտիկից նկարել է խճանկարի տեսքով պատրաստուած յունարէն լեզուով գրութիւնը. «Մենք կառուցում, կառուցում էինք, իսկ մեզ չվճարեցին»: Մեր երկրին սիրահարուած մտաւորականը գրում է, որ Հայաստանում ատելի վառ է արտայայտուած հնի եւ նորի միաձուլումը մէկ ամբողջութեան մէջ եւ նորից է շեշտում, որ աշխարհն ատելի լաւ հասկանալու համար պէտք է ատելի խորը տեսնել Հայաստանը: Իսկ մենք դա չենք տեսնում:

Վերջերս յաճախ եմ մտածում, որ սէրը հայրենիքի եւ կնոջ նկատմամբ իրարից ընդամենը մի կարեւոր յատկանիշով են տարբերում: Երբ սիրում ես կնոջը, ցանկանում ես, որ նա սիրի միայն քեզ, իսկ երբ սիրում ես քաղաքը կամ երկիրը, ուզում ես, որ քո սէրը հաստ լինի բոլորին: Որ հողը շնչող մարմին է. երբ այն մշակում ես, արթնացնում ես նրա յիշողութիւնը եւ գութանով բացուած ամէն ակօս դառնում է կեանքի, բերքի ու նոր ծնունդի խոստում: Որ հայրենի հողը վայրի կճղակները երկար չի հանդուրժում: Որ շողորոքութիւնը՝ հաճոյախօսութիւնից, իսկ հաճոյախօսութիւնը՝ արժեւորումից տարբերողը, երբեք հիասթափութիւն չի ապրի...

Երեւան
15.10.2025

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշաիր Կեօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ Աւետիքեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուօ)
Զաւէն Գրիգորեան	(Նթեւթ)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՈՍԿԵԴԱՐՈՒ ԴԱՍԵՐ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ
ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏԳԱՄԸ ՄԵԶՄԵ ԻՒՐԱՔԱՆՉԻՐԻՆ

Հայ Եկեղեցին ամեն տարի Հոկտեմբեր ամսուն կը նշէ Սրբոց Թարգմանչաց տօնը: Տօնի խորհուրդը դարեր շարունակ եւ տարբեր պատմական ժամանակահատուածներուն, մեր հոգեւոր եւ աշխարհիկ դասի կողմէ, մեզի փոխանցուած է: Մեզմէ իւրաքանչիւրը իր պաշտօնի բերումով, նոյն առաքելութեամբ շարունակած է եւ կը շարունակէ այդ պատգամը, ուղերձը փոխանցել նոր սերունդին՝ դարու մարտահրաւերները թիավարելով:

Մենք, որպէս շառաւիղներ այդ Ստեղծագործներուն, այսօր առաւել քան երբեւէ կրկին մեր հայեացքը կ'ուղղենք եւ կը դիմենք անոնց, որոնք այբուբեն պարզեցնելու մեր ժողովուրդին՝ մայրենի լեզուով արտայայտուելու, թոյլ տուին առնչուիլ Աստուածաշունչին հետ մեր մայրենիով եւ դարերու ընթացքին սնահատութեան, եասիրութեան եւ խաբէութեան փոխարէն՝ գիտելիքի, իմաստութեան եւ ազնուութեան վրայ հիմնուած կենսակերպ մարմնաւորեցին:

Տասնվեց դար անց, մենք կրկին կ'անսանք անոնց խորհուրդներուն եւ կը քալենք անոնց ուղիով:

Այսօր, անտարբեր այս աշխարհահամակարգի մէջ անոնք ի՞նչ դասեր կ'առաջարկեն մեզի, արդեօ՞ք անոնց գործողութիւնները այժմեական են փոփոխուող ամենօրեայ մեր կեանքին համար:

Հինգերորդ դարուն սուրբ թարգմանիչները, զարմանալիօրէն, ապրեցան այդ դարու աշխարհաքաղաքական սպառնալիքները, եւ անոնց ոգին ձգտեցաւ ճեղքել դարու ժխտող՝ պարզութեան հասնելու: Աստուածաշունչէն անոնց թարգմանած առաջին բառերն եղան. «ճանչաւ իմաստութիւնն ու խրատը... հասկնալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը» (Առակաց 1.2-3):

Այսօր, 21-րդ դարուն, ի՞նչ կրնանք սորվիլ Ս. Թարգմանիչներէն:

Առաջին. նախ ճշմարտութիւնը պէտք է դասել ամեն ինչէն վեր. թարգմանիչները հաւատարմօրէն թարգմանեցին, փորձեցին բացայայտել եւ հասկնալ լուսագոյն աղբիւրները եւ երբեք չփորձեցին իրենց սեփական օրակարգը մտցնել բառերուն մէջ: Մեզի համար նոյնպէս ճշմարտութիւնը պէտք է առաջնահերթ ըլլայ. ապա հոս վենք մեր աղբիւրներու հաւաստիութիւնը, ժամանակ տանք տարբեր կողմերն ու տեսակետները հասկնալու համար, մերժենք գաղտնիութիւնը, քարոզչութիւնը, նենգափոխութիւնը եւ կողմ ըլլանք թափանցիկութեան եւ անկեղծութեան:

Երկրորդ. հապճեպութեան փոխարէն նախընտրել խորամիտ ու համբերատար մօտեցում. խուսափիլ մակերեսային լուրերէն եւ զերծ մնալ արագ ու չմտածուած դատողութիւններէն: Թող խորամտութիւնը մեզ առաջնորդէ բացայայտելու երեւոյթներու բուն էութիւնը:

Երրորդ. ծառայութիւնը գերադասել իշխանութենէն. թարգմանիչները դպրոցներ կառուցեցին եւ խիղճ ձեւաւորեցին: Անոնք աշխատեցան զերոյէն վեր, չպարտադրեցին վերէն վար: Անոնք աշխատեցան տարբեր շրջաններու հայերը համախմբել մէկ շրջագիծի մէջ: Նոյնկերպ, մենք չենք կրնար թոյլ տալ, որ մեր սրբազան ժառանգութիւնը զենք դառնայ միմեանց դէմ. մենք կառուցելու համար այնպիսի ձեւով պէտք է զայն օգտագործենք, որ ամրապնդէ մեր ժողովուրդը ընդհանուր առմամբ, եւ որ պատուէ Աստուծոյ պատկերը մեզմէ իւրաքանչիւրին մէջ:

Չորրորդ. աղօթքը առաջնահերթ համարեցէք խօսքէն կամ գործողութենէն առաջ. անոնք կը հասկնային, որ Աստուծոյ առջեւ մեր խոնարհութիւնը ճանչնալը մարդու հետ ցանկացած փոխազդեցութենէն առաջ առաջին քայլն է: Մենք նոյնպէս պէտք է խօսիմք եւ գործենք այն գիտակցութեամբ, որ Աստուծոյ աչքերը մեր վրայ են. որ մեր նպատակն է կատարել Անոր կամքը: Մեր հաւատքը ներդնենք կենդանի հաստատութիւններու մէջ, որպէսզի ատոնք ըլլան վստահելի, հաշուետու եւ ուշադիր ընդհանուր բարօրութեան նկատմամբ:

Այս դասերէն քաղելով՝ դիտարկենք զանոնք որպէս այսօրուան ճշգրիտ քայլեր.

Իւրաքանչիւր հաւատացեալ.
-Ներշնչուելով Սուրբ Գիրքով ու մեր սուրբերու վկայութեամբ՝ սուրբգրային խօսքը վերածէ առօրեայ գործի. աշխատանքի մէջ ըլլան ազնիւ ու արդար, պահպանեն խօսքի պարզութիւնն ու մաքրութիւնը: Իւրաքանչիւրը թող փորձէ հրաժարիլ չարախօսութենէն, ընդդիմախօսի հանդէպ նուաստացնող խօսքէն, իսկ հարկ եղած պարագային զայն ուղղել մեղմութեամբ: Չմոռանան նաեւ սիրոյ եւ ողորմութեան պատգամը՝ կարեկցանք դրսեւորեն կարօտեալներուն եւ տառապեալներուն հանդէպ:

-Կիրառեն թափանցիկ կառավարում եւ սահմանեն ազնուութեան հանրային չափանիշ: Պետական ծառայողներու եւ առաջնորդներու համար պաշտպան են իւրաքանչիւր անձի խիղճի ազատութիւնն ու արժանապատուութիւնը: Խօսին պարզութեամբ, խուսափին սրբազան լեզուի խեղաթիւրումէն եւ ողջունեն անկախ վերահսկողութիւն: Ձգտին ընդհանուր բարօրութիւնը դասել՝ կուսակցական շահերէն վեր: Կառուցեն հարթակներ, ուր Սփիւռքն ու Հայրենիքը համագործակցին երկարատեւ օգուտի համար:

-Լեզուն դարձնեն մշակոյթի աղբիւր: Հայոց լեզուն ոչ միայն ժառանգութիւն է, այլեւ կենդանի հարստութիւն: Սիրեն եւ պատուեն զայն, յատկապէս սփիւռքի մէջ՝ կարդան, ուսուցանեն եւ ստեղծագործեն մայրենիով: Երբ լեզուն կ'ապրի, այբուբենը կը դառնայ սերունդները միաւորող կամուրջ, այլ ոչ՝ պատ, որ կը բաժնէ զանոնք:

-Արժեւորեն համայնքային հաստատութիւնները՝ հիմնեն նոր եկեղեցական համայնքներ, դպրոցներ, լրատուամիջոցներ ու կազմակերպութիւններ՝ ի բարօրութիւն մեր ժողովուրդին:

Սիրելի հաւատացեալներ.
Եկեղեցին Աստուծոյ պարգէն է մեզ շնորհուած. ան չի պատկանիր որեւէ

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՄԵԱՆ

կուսակցութեան: Եկեղեցին այն կապն է, որ կը հիւսուի մեր պատմութեան միջոցով՝ մեր անցեալի սերունդները կապելով բոլոր հայերու հետ, իմաստ տալով անոնց նուաճումներուն եւ զոհաբերութիւններուն՝ վստահեցնելով մեր երեխաներու կողմէ ժառանգուող ապագայի մասին:

Մեր հայրենիքը եւս մեծագոյն պարգէն է, մեր ազգային ինքնութեան մարմնաւորումն է, որ կը միաւորէ բոլոր հայերը: Անոր առօրեայ գոյութիւնը, բնականաբար, արտայայտութիւն կը գտնէ քաղաքական դաշտին մէջ, ուր կան տարբեր կարծիքներ եւ մրցակցող ձայներ: Քաղաքականութիւնը առաւել արդիւնաւէտ կը ծառայէ ազգի շահերուն, առաջնորդուելով միայն գաղափարական, բարոյական եւ հոգեւոր այն արժէքներով, որոնք դարեր շարունակ լուսագոյն բնութագրած է հայ ժողովուրդը:

Թող աղօթքը առաջնորդէ խօսքն ու գործը. անոնք կը գիտակցէին, որ մարդը չի կրնար ճշմարիտ խօսք ըսել կամ արդար գործ ընել, եթէ նախ չխոնարհի Աստուծոյ առջեւ: Մեր իւրաքանչիւր խօսքը եւ քայլը թող սկիզբ առնեն աղօթքէն՝ յիշելով, որ Աստուծոյ հայեացքն է մեր վրայ:

Ուստի, հասարակական ծառայողները, քաղաքական գործիչներն ու պաշտօնատար անձինք կոչուած են պաշտպանելու խիղճի ազատութիւնն ու մարդու արժանապատուութիւնը՝ խուսափելու խեղաթիւրումէն: Իրենց որոշումներուն մէջ անոնք պէտք է գերադասեն ազգային բարիքը կուսակցական շահերէն: Միայն այդպէս հնարաւոր կ'ըլլայ ստեղծել առողջ հասարակութիւն եւ բարգաւաճ երկիր՝ ամուր կապերով Սփիւռքի ու Հայրենիքի միջեւ:

Ոսկեղարու դասերը.

Սուրբ թարգմանիչներու Ոսկեղարը ոչ միայն անցեալի յիշողութիւն է, այլեւ մեզ առաջնորդելու ձգտում:

Հայոց այբուբենը ստեղծելով՝ թարգմանիչները մեզի տուին լոյս եւ գիտելիք բերելու գործիք: Անոնք հաւատացած էին, որ իրենց յաջորդող հայերը կ'ընտրեն այս գործիքը լուսագոյն եւ բարձրագոյն ձեւով օգտագործելու համար:

Նոր Ոսկեղարը անբաց չէ. ան հնարաւոր է նոյնիսկ մեր օրերուն: Ան կը սկսի փորձիկ քայլերով՝ ընտանիք, որ միասին կ'աղօթէ, ուսանող, որ կը բացայայտէ Նարեկացիի ոգին, համայնք, որ զօրավիզ կը կանգնի տառապեալներուն, պետական ու հասարակական հաստատութիւններ, որոնք կ'աջակցին գիտութեան, կրթութեան եւ մշակոյթի զարգացման: Աստուած այդ փորձիկ սերմերը Իր շնորհքով կը վերածէ առատ բերքի:

Մեր եկեղեցւոյ սիրելի զաւակներ, այսօր մեզմէ իւրաքանչիւրը կոչուած է դառնալու Քրիստոսի «կենդանի թուղթ», ինչպէս կ'ըսէ Սուրբ Պողոս առաքեալի երկրորդ թուղթը ուղղուած «Յայտնի էք որպէս Քրիստոսի Թուղթեր» սպասատրուած մեզմէ եւ գրուած ոչ թէ մեկանով, այլ կենդանի Աստուծոյ Հոգիով, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, այլ սրտի մարմնեղէն տախտակներու վրայ»:

Այդ թուղթը կը կարդացուի մեր վարքի, գործերու եւ ծառայութեան մէջ: Տիրոջմէն խնդրենք՝ Սուրբ Թարգմանիչներու աղօթքներով եւ բարեխօսութեամբ մաքրել մեր միտքերը խառնաշփոթութենէն, մեր սիրտերը մակերեսայինէն եւ ազատել մեր վկայութիւնը շահարկումէն, որպէսզի մենք կարենանք ընթանալ ճիշդ ուղիով, գործել արդարութեամբ եւ նպաստել նոր Ոսկեղարի մեկնարկին՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ:

Հոռն

Ներ Նորք

«ՅՈՅՍԵՐ» ԵՐԱԺՇՏԱՆՈՒՄԸ ՏՕՆԵՑ
ԻՐ 15-ԱՄԵԱԿԸ

Անցեալ Շաբաթ, Բուինգ թատրոնին մէջ «Յոյսեր» երաժշտախումբը տօնեց իր գործունէութեան 15-ամեակը:



15 տարիներ շարունակ, «Յոյսեր»-ը եղած է Հայ համայնքի մէկ ամուր մշակութային սինը: Ան միշտ ներկայացուցած է նորը՝ արժեւորելով հինը, առանց օտար ազդեցութեան:

«Յոյսեր»-ը հանդիսատեսին ներկայացաւ գեղեցիկ եւ անգուզական յայտագիրով: Շուրջ երկու ժամ ներկայացուած ծրագիրը յազեցուց հանդիսատեսի հայ արուեստի ծարաւը: Համերգին մասնակից էին նաեւ երաժիշտներ Հայաստանէն եւ Զալիֆորնիայէն, որոնց գեղեցիկ կատարումը կրկնապատկեց համերգին ճոխութիւնը: Երեկոն արարտեսաւ հանդիսատեսին յոտնկայս բռնուն ծափահարութիւնով:

Համերգը վկայութիւն մըն էր, թէ Յոյսերու նման յանձնառու խումբ մը իսկական զանձն է մեր համայնքին՝ շարունակելով կենդանի պահել մեր երաժշտական ժառանգութիւնը:

Յաջորդ թիւով կ'անդրադառնանք լայնօրէն:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԿԱԶԱՆ.

ՀՐԱԴԱԴԱՐԸ ԿՐԼԱՅ ԴԱԴԵՑՆԵԼ ԿՐԱԿԸ, ԲԱՅՑ ԶԻ ԿՐԼԱՐ ԲՈՒԺԵԼ ՎԵՐՔԸ

ԿԱԶԱՅԻ ՏԱԳԱՆՊՈՐ ԵՒ «ՀԱՐԱ ԱՆ ՀԷՅԻ»Ի ԳԱԳԱԹՈՐ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍԱԳՕ ԱՐԵՄՆԻ

Անցեալ երկուշաբթի օր «Շարմ Ալ Շէյխ»-ի մէջ տեղի ունեցած «խաղաղութեան գազաթափոց»-ը, որուն մասնակցեցան աւելի քան քսան երկիրներու ներկայացուցիչներ, դարձաւ նոր փորձ մը՝ Կազայի պատերազմին վերջ տալու եւ շրջանին համար քաղաքական լուծում մը գտնելու: Ժողովը հովանաւորեց Եգիպտոսի նախագահ Ապտըլ Ֆաթթահ Ալ Սիսին, եւ համաձայնագրեց ԱՄՆ-ի նախագահ Տոնալտ Թրամփ:

Բացման ելոյթին ընթացքին, ալ Սիսին շեշտեց, թէ «խաղաղութիւնը այլ-ընտրանք չունի», իսկ Թրամփ խոստացաւ «միջազգային ճնշում բանեցնել երկու կողմերուն վրայ՝ հրադադարի եւ գերիներու ամբողջական ազատ արձակման հասնելու համար»:

Իսրայէլ եւ «Համաս» չմասնակցեցան սոյն կարեւոր ժողովին:

Նաթանիախու նախընտրեց մնալ Թէլ Աւիւի մէջ՝ «անվտանգութեան մտահոգութիւններով եւ պատճառներով»: Ներկայներուն մէջ էին Երոմիութեան, Արաբական Լիգայի, Թուրքիոյ, Քաթարի, Յորդանանի, Ֆրանսայի եւ Մեծն Բրիտանիոյ նախարարական պատուիրակութիւններ:

Գազաթափոցովին ընթացքին Եգիպտոս ներկայացուցած է հրադադարի յստակ նախագիծ մը՝ որ կը ներառէ.

- 1.Ռազմական գործողութիւններու անմիջական դադարեցում:
- 2.«Կարմիր Խաչ»-ի միջնորդութեամբ՝ բոլոր գերիներու փոխանակում:
- 3.ԱՄԿ-ի հովանաւորութեամբ՝ Կազայի քաղաքացիական կառավարման ժամանակաւոր մարմին:
- 4.Միջազգային հիմնադրամ մը՝ վերակառուցման եւ մարդասիրական օգնութեան համար:

Այս քառակի փաթեթը ընդունուեցաւ դրական արձագանգով: Ներկայ եղող երկիրները որոշեցին գալիք շաբաթներուն շարունակել բանակցութիւնները՝ Ժընեւի կամ Ամմանի մէջ:

Իսկ բեմերէն անդին՝ ԱՄԿ-ի քարտուղարն ընդգծեց, թէ «Շարմ Ալ Շէյխի ժողովը թերեւս չլուծէ Պաղեստին-իսրայէլեան հակամարտութիւնը, բայց կըրնայ կասեցնել մահը»: Գազաթափոցովին կողքին հաւաքուած էին նաեւ մարդկային իրաւունքներու պաշտպան խմբակներ, որոնք պահանջեցին անմիջական մարդասիրական մուտք դէպի Կազա, ուր աւելի քան մէկ միլիոն մարդ կը մնայ հացի, ջուրի եւ դեղորայքի լուրջ կարիքներու մէջ:

Թէեւ վերջնական համաձայնութիւն չկայ, բայց եւ այնպէս «Շարմ Ալ Շէյխ»-ի գազաթը վերածուեցաւ խորհրդանշական պահի մը՝ ուր աշխարհը, թեկուզ ուշացած, փորձեց դարձեալ լսել Կազայի վիրաւոր ձայնը:

Ի վերջոյ Կազայի մէջ տեղի ունեցած սպանդներէն ետք Իսրայէլ ինչքանով պատրաստ է խաղաղութեան նոր էջ մը բանալու:

Պաղեստինցիներուն (Յատկապէս նախագահ Մահմուտ Ապպասի իշխանութեան) ի՞նչ դեր վստահուած պիտի ըլլայ եւ ամենակարեւորը Կազայի համար ի՞նչ նոր էջ ակնկալենք:

Միւս կողմէ ամերիկեան մեծ դերի կողքին, Ռուսական եւ մանաւանդ Իրանեան դերերը մեծ նահանջ մը ապրեցան Մերձ. Արեւելքի մէջ ու էական է գիտնալ, որ այդ երկիրները պիտի մարսե՞ն այդ նահանջը կամ ոչ:

Կայ արդարացի տեսակէտ, որ խաղաղութեան գազաթափոցովները միշտ ալ գեղեցիկ բառերով կը սկսին. կը խօսուի «նոր էջեր»ու , «վերակառուցման» եւ «անվտանգ ապագայի» մասին: Բայց առանց արդարութեան եւ պատասխանատուութեան՝ այդ բոլորն ընդամենը արարողութիւն կը դառնան: Երբ բռնութիւնը կը դադրի առանց խորքային պատճառները վերացնելու, խաղաղութիւնը «կը բանտարկուի» խորագիրներու մէջ: Իսկ այս օրերուն , «Շարմ Ալ Շէյխ»-ի սրահներուն մէջ հնչող խօսքերը պիտի արժեն այնքան, որքան կրնան դիմանալ Կազայի արիւն «բուրդ» փոշոտ օդին մէջ:

Կազայի տագնապը ... եւ Իսրայէլի «ներքին ճաքեր»ը

Կազայի մէջ կնքուած նոր հրադադարը, որ իբրեւ «պատմական շրջադարձ» կը ներկայացուի իսրայէլեան որոշ լրատուամիջոցներու կողմէ, խորքին մէջ կը բացայայտէ Իսրայէլի քաղաքական եւ ռազմական «անճարութիւն»ը: Հրադադարը, որու մասին համակարծիք են Թէլ Աւիւի քաղաքական ոչ բոլոր շրջանակները, , չի խորհրդանշեր խաղաղութեան սկիզբ մը, այլ ժամանակաւոր դադար մը պատերազմական մեքենայի մէջ, որ երկար տարիներ շարունակուող ընթացքի մը մէկ նոր փուլն է:

Թէլ Աւիւեան մամուլը այս անգամ բաժնուած է երեք ճամբարներու. առաջինը կը փորձէ համոզել հանրութիւնը, թէ այս համաձայնութիւնը «դիւանագիտական յաղթանակ» մըն է՝ գերիներու վերադարձի եւ միջազգային աջակցութեան դիմաց: Երկրորդը՝ աւելի քննադատական, կը տեսնէ Իսրայէլի պարտութիւնը՝ քաղաքական եւ բարոյական իմաստով, որովհետեւ Նաթանիախուն չկարողացաւ հասնիլ «Համաս»-ը վերացնելու իր խոստումին: Իսկ երրորդը, աւելի սառնասիրտ վերլուծաբաններու շրջանակը, կը խոստովանի, որ Թրամփի ճնշումով ձեռք բերուած այս համաձայնութիւնը աւելի շատ կը բխի ընտրական եւ անճնական շահերէ, քան ռազմավարական կայունութենէ:

Ակնյայտ է, որ Թրամփ, իր բնորոշ խաղային ոճով, փորձեց իրացնել Կազայի հրադադարը որպէս սեփական ձեռքբերում, իբրեւ «խաղաղութեան ճակատամարտի հերոս»՝ Նոպէլեան մրցանակէն առաջ (որուն տիրանալու Թրամփի «երազանք»ը աւելի ուշ «ջուրը ինկաւ»): Միւս կողմէ իրականութիւնն այն է, որ այս համաձայնութիւնը ոչ մէկ խաղաղութիւն կը խոստանայ: Նման համաձայնութիւններու պատմութիւնը Միջին Արեւելքի մէջ բազմաթիւ է՝ կարճաժամկէտ, փխրուն եւ առանց վստահութեան հիմքի:

Մինչ Թէլ Աւիւ կը փորձէ պահել «յաղթանակի պատրանք»ը, Կազայի մէջ ժողովուրդը կը փորձէ վերապրիլ: «Համաս» կը ներկայացնէ հրադադարը որպէս դիմադրութեան յաղթանակ՝ տեղահանուածներու վերադարձի եւ օգնութիւններու մուտքի շնորհիւ: Անոր կողմէ տարածուած այս «յաղթական» պատմութիւնը, որքան ալ քարոզչական հնչեղութիւն ունենայ, կը փաստէ իրականութիւնը՝ Իսրայէլ չկարողացաւ կոտրել Կազայի դիմադրութիւնը՝ ոչ գէնով, ոչ ալ պաշարմամբ:

Նաթանիախուի կառավարութիւնը, ներսէն պառակտուած, կը կանգնի քաղաքական ճգնաժամի առջեւ: Աջակողմեան կուսակցութիւնները, թէեւ կը քննադատեն հրադադարը, չեն համարձակիր հեռանալ դաշինքէն՝ իշխանութեան կորուստէն վախճալով: Արդիւնքը՝ ներսէն ճաքած, արտաքին ճնշումներով կաշկանդուած Իսրայէլ մըն է, որ կը փորձէ պահպանել ուժեղ պետութեան

պատրանքը, բայց իրականութեան մէջ կը կորսնցնէ իր նախաձեռնութիւնը:

Քաղաքական վերլուծաբան Ամիթ Սիգալ՝ Իսրայէլի ամենանշանաւոր մեկնաբաններէն մէկը, կ'ընդունի, որ այս պատերազմը պիտի յիշուի իբրեւ «բարձր գնով ձեռք բերուած փորձառութիւն», բայց ոչ իբրեւ յաղթանակ: Թրամփի առաջարկած «երկրորդ փուլը»՝ տարածաշրջանային ուժերու միջոցով «Համաս»-ի զինաթափում, կը մնայ անիրագործելի երազանք: Միջին Արեւելքը ոչ մէկ անգամ ճանչցած է խաղաղութեան կայուն «ձեւաչափ» մը, եւ այս անգամ ալ բացառութիւն մը չէ այդ մէկը:

Կազայի ապագան այսօր կը գտնուի մութ, անորոշ հորիզոնի մը վրայ: Հրադադարը կրնայ դադրեցնել կրակը, բայց չի կրնար բուժել վէրքը: Կազայի վերաշինութիւնը պիտի ըլլայ պայմանաւորուած՝ «Համաս»-ի զինաթափումով, բայց եթէ միջազգային ճնշումները եւ մարդասիրական պահանջները գերակշռեն, Իսրայէլ դարձեալ պիտի գտնուի իր նախորդ սխալներուն մէջ՝ դէմ-դիմաց այն իրականութեան, որուն անունն է՝ Կազա:Այսպիսով, Կազան դարձեալ կը վերածուի հայելիի մը, ուր կ'արտացոլուին ոչ միայն պաղեստինեան դիմադրութեան տոկոմութիւնը, այլ նաեւ իսրայէլեան ինքնավստահութեան ճաքերը: Այն ինչ Թէլ Աւիւր կը ներկայացնէ որպէս «վերջ», գուցէ իրականութեան մէջ նոր սկիզբ մըն է՝ միացեալ տարածաշրջանի մը զայրոյթին ու անարդարութեան դէմ յառնելու: Այս օրերուն Կազան, դարձեալ, կը դառնայ բեմ մը ոչ միայն պատերազմի, այլեւ ճշմարտութեան:

ԹՐԱՄԹ ԿՐԼԱՅ «ՁՈՂԵԼ» ՆԱԹԱՆԻԱՒՈՒՆ.

ԻՆՉ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՈՒ ՍՊԱՍԵՆՔ

Թրամփի

Մերձ. Արեւելեան վերջին շրջապըտոյտէն ետք նոր օրակարգերու ականատեղը կըրնանք ըլլալ: Այդ օրակարգին մէջ ուղղակի անդրադարձ պիտի ըլլայ Իսրայէլի ներքաղաք աղաքական կեանքին: Հարցը այսօր այսպէս կը դրուի՝ ի՞նչ պիտի պատահի Նաթանիախուին, եթէ Ուաշինկթընը այլեւս չտեսնէ իր մէջ անփոխարինելի դաշնակից մը:

Ակնյայտ է, որ Միացեալ Նահանգները դժոռ են Նաթանիախուի վարած քաղաքականութենէն: Վերջին պատերազմին ընթացքին՝ Կազայի մէջ կատարուած զանգուածային սպանութիւնները, որոնք միջազգային մամուլին մէջ սահմանափակ կերպով «պաշտպանուեցան», դարձան իսկական բեռ ոչ միայն Իսրայէլի, այլ նաեւ իր հիմնական հովանաւորին՝ ամերիկացիներուն վրայ: Թրամփ, որ այժմ կը փափաքի ներկայանալ որպէս «խաղաղարար» նախագահ, այլեւ պիտի չուզէ շարունակել պաշտպանել մարդ մը, որուն անունը կը կապուի ցեղասպանական գործողութիւններու հետ:

Հիմա, երբ Կազայի մէջ կրակը դադրեցաւ, Իսրայէլ «փոքրիկ բռնակալը»՝ Նաթանիախուն, այլեւս այնքան օգտակար չէ Թրամփին: ԱՄՆ-ի նոր վարչակազմը կը փնտռէ իր ազդեցութիւնը վերագտնելու միջոցներ, իսկ Նաթանիախուն դարձած է արգելք՝ թէ՛ դիւանագիտական, թէ՛ կերպարային իմաստով:

Ներքին դաշտին վրայ՝ Իսրայէլը կանգնած է խորը ճեղքուածութեան առջեւ: Կառավարութեան հանդէպ դժգոհութիւնը աճող է. բազմաթիւ իսրայէլցիներ կը նկատեն, թէ Նաթանիախուն ռազմավարութիւնը ձախողեցաւ նաեւ անվտանգութեան ոլորտին մէջ: Տարբեր միջոցի ճնշումներ, հանրային ցոյցեր եւ դատական գործեր կը կուտակուին եւ բոլորը «Դամոկլեան սուր»-ի նման կախուած «Պի. Պի.» գլխուն վրայ:

Թրամփը կրնայ ընել երեք բան.

1. Պահպանել Նաթանիախուն, եթէ տեսնէ, որ ան դեռ օգտակար է իրեն համար՝ իբրեւ տարածաշրջանային խաղաղող մը: Այդ պարագային Իսրայէլի ներքին բեւեռացումը աւելի պիտի խորանայ:
2. Թելադրել զիջումներ, մանաւանդ անվտանգութեան կամ խաղաղութեան գծով՝ փորձելով Նաթանիախուն «մեղմեցնել» միջազգային բեմին վրայ:
3. Չոհեղ զինք, եթէ ճնշումները աւելնան: Այդ պարագային Թրամփ պիտի ներկայացնէ Նաթանիախուն որպէս անցեալի «մնացորդ» տալով ազդանշան մը թէ՛ ամերիկեան հանրային կարծիքին, թէ՛ արաբական աշխարհին, որ իրապէս նոր էջ մը կը բացուի Մերձատըր Արեւելքի մէջ:

Բոլոր պարագաներուն Նաթանիախուի ճակատագիրը կախուած է երեք առանցքային գործօնէ.

- Անոր ներքին- կառավարական-դաշնակցային ամրութենէն,
- Իսրայէլեան հասարակութեան համբերութենէն,
- Թրամփի անճնական շահերէն:

Ամէն բան կը վկայէ, որ Ուաշինկթընն այլեւս չ'ուզեր անսահման կերպով պաշտպանութիւն տրամադրել Նաթանիախուի իշխանութեան: Իսկ եթէ Միջազգային Համայնքը «կուլ տայ» Կազայի սպանդը՝ այդ մաքրութիւնը պիտի դառնայ նաեւ Թրամփի սրբազրուած շահին մէկ մասնիկը: Իսկ եթէ ոչ՝ այն ստեն Թրամփ պիտի գոհէ Նաթանիախուն՝ որպէս քաղաքական ու բարոյական գին վճարելով նոր «խաղաղութեան դարաշրջան» մը սկսելու համար:

Երեւան

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԿԱԶԱ, ԴԵՊԻ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆՆԻՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Խաղաղության ազդանշանը տրուած էր ու միջազգային մամուլը կ'աւետէր պատերազմի աւարտը: Բռնի տեղահանումներ յեղակարծօրէն կը շտապէին վերադառնալ իրենց տունները՝ թէկուզ զանոնք փլատակ տեսնելու գնով: Բոլորը լուռ եւ արագընթաց կ'արշաւէին, հակառակ իրենց փոքրկայտիկ հոգիներուն: Իրենց խոժոռ հայեացքներուն ու պոստած յօնքերուն ընդմէջէն ցատումը



ակնյայտ էր: Անհնարին էր զանազանէլ միլիոնաւոր իրենց քայլերուն դոփիւնի եւ սրտի տրոփումի ձայները... սակայն յոյսի մը նշոյլը պտղունց մը երջանկութեան շիկացած կայծեր կ'արձակէր, կարծես միլիոնաւոր նժոյգներ կ'արշաւէին փլատակներով լեցուն քարքարոտ ուղիներուն վրայէն, իրենց սմբակներուն տակէն արնածոր կայծեր թափելով: Բայց քայլարշաւի ուղղութիւնը դէպի մայր հող էր, դէպի հայրենի տուն: Աքսորէն մաշած ոտքերով եւ տունդարձի հաւատքը չկորսնցուցած սրտերով:

Կէս միլիոն մարդ կը վերադառնար աւերուած քաղաք՝ Կազա: Հոգեւոր հայրենիք՝ հայրենի օճախներ, ուր միայն մոխիր կար փոխան ծուխի, մահ կար փոխան կեանքի, եղեռն ու աւար: Բայց անոնք կը վերադառնային, որովհետեւ վերադարձի խորհուրդը իրենց համար տեղ մը չէր, այլ պատկանելութեան զգացում ու արեան կանչ:

Բռնի տեղահանեալին հոգեվիճակը միայն բռնագաղթեալը կը հասկնայ: Իրենց ետին ձգած հայրենի դաշտերէն ու դալարագեղ արօտավայրերէն մշակին ճակտի քրտինքին բուրմունքին փոխարէն, արեան ու հիւլէական ռումբերու բունատուր զարշափոտը կը թափանցէր անոնց հոգիներէն ներս, մինչ յատենի ծաղկած դաշտերուն մէջ արձակուած ռումբերը խանդակներ փորած էին, ձիթենիներու ճիւղերը ասփին-անդին շարտելով: Իւրաքանչիւր կանաչ ճիւղ ծննդեան հռչակագիր մ'էր, իսկ ձիթենիի իւրաքանչիւր հատիկ՝ խոստում ու ապացոյց, որ արմատները, այո՛, երբեք չեն մեռնիր: Եւ ահա անոնք կը շարունակեն վերադառնալ՝ կրկին ծաղկելու եւ ծաղկեցնելու:

Յաճախ ըմբոստացած են եւ նոյնիսկ տարակարծիք եղած՝ երբ մարդիկ արտայայտուէին, թէ հայկական հարցը շատ մեծն է պաղեստինեանին: Կ'ընդունին, որ անոնք եւս կառչած են հողին, այնպէս ինչպէս իր ժողովուրդը կառչած է կեանքին: Սի գուցէ ճակատագրակից ժողովուրդ ենք հողային պահանջատիրութեան առումով, եղեռնի ենթարկուած ըլլալով, սակայն պէտք է ընդունին, որ անոնց աղօթքները անպատասխանի չմնացին, որովհետեւ աշխարհի տարածքին գտնուող իւրաքանչիւր պաղեստինցի նոյն աղօթքը մըմնջեց, առանց ճեղքեր ստեղծելու բառ ու բանին միջեւ: Պայծառ երկնակամարին վրայ մռայլ ամպեր չփնտռեցին, այլ միայն Հայրենիքը ամէն բանէ վեր դասեցին: Եւ ահա անոնք երկար տուայտանքներէ ետք, այսօր անոնք արդարօրէն կը վերադառնան՝ կանխելու բացակայութեան մոռացումը եւ աշխարհին բարձրաձայնելու, թէ թէի դուք խուլ ու կոյր ձեռացաք, սակայն մենք այստեղ ենք, մեր հողերու պահանջատէրն ենք ու ահա անոնք կը վերադառնան, կրկին ոռոգելու մեր դաշտերը եւ երազելու վաղուան յաղթական Պաղեստինի մասին: Վասնզի ասիկա լոկ վերադարձ չէ, այլ դիմադրութեան գործընթաց եւ կեանքին պատասխանը՝ մահուան:

Ես ալ կ'ուզեմ Հայրենիքս ամէն բանէ աւելի վեր դասել, նորահաս սերունդին հոգիներուն մէջ յոյսի նշոյլներ ցանել, որոնք երբեք ատելավառ պիտի չըլլան: Չէ՞ որ մեր Արցախը հարուստ է իր հոգեւոր ու նիւթական, բնական ու արւեստի հնադարեան ու նորաստեղծ կոթողներով, անառիկ բերդերով ու դարերու խորքէն եկած մանրանկարչութեամբ հարուստ իր եկեղեցիներով ու վանքերով, որոնք դարեր շարունակ պահպանած են Արցախ աշխարհի հայկական ինքնութիւնը: Եւ այս բոլորը կու գայ հաստատելու, որ այդ մշակոյթը գոյութիւն ունէր այդ հողերուն վրայ նախքան քրիստոնէութեան հաստատումը: Թող պատերազմներէն ու փոթորիկներէն փրկուած ծիրանների հատիկները կրկին ցանին ու ծաղկեցնեն հայոց աշխարհի վիրաւոր հողին, որ առանց հայ մշակի ճակտէն ծորող քրտինքին անբերրի է դարձեր: Թող որ մենք ալ ի սփիւռս աշխարհի նոյն աղօթքները մըմնջենք, նոյն բառ ու բանին հաղորդակից ըլլանք, վասնզի անդին՝ մեր ցանքերը, մեր օճախներն ու այրած ծառերը կրկին պիտի չծարձակին առանց հայու պայքարող ու հաւատքով լի ոգիին:

Նախանձով դիտենք անոնց վերադարձը, որովհետեւ իրենց համար վերադարձի խորհուրդը լոկ ճանապարհորդութիւն չէր: Այլ դէպի ապագայապաշտ խոստում: Հայրենիքի խորհուրդը չի չափուի իր կալուածներով, այլ անոնցմով, որոնք կը հրաժարին լքել զայն ու ամէն գնով տէր կը կանգնին հողին: Վկայ՝ համշէնահայերը, որոնք ամենադառն բաժակները ըմպելով, տէրը մնացին իրենց հողին: Այսօր իրենց հայրենական դաշտերուն մէջ հասակ առած իւրաքանչիւր ծառ իր մէջ թաքնուած տոկոսներէն պատմութիւն մը ունի, իսկ իւրաքանչիւր կանաչ ճիւղ՝ յոյսի ուղեւոր, որ ամէն պահ կը յուշէ վերապրելու եւ վերադառնալու խորհուրդը:

ՊԱՅՔԻ ԳԱԼԱՅՈՒՆ

Մեր նորահաս սերունդը արժանի է խաղաղ երկնքի տակ ապրելու եւ ողջունելու ՄԵՐ վերադարձի օրը, որովհետեւ արցախեան հողի վրայ հայ ազատամարտիկի արիւն ծորած է, անոնց կիսատ մնացած գործը հաստատ շարունակելու:



նակուելու է հայրենական հողին վրայ: Հակառակ որ օտար երկնակամարի տակ տրուեցաւ ՄԵՐ խաղաղութեան ազդանշանը, սակայն մենք կը հաւատանք, որ խաղաղութիւնը դուրսէն չի գար, այլ կը բնակի մեր հոգիներուն մէջ, խաղաղ ու մաքրամաքուր հայու հոգիին մէջ, իւրաքանչիւր հայեացքի մէջ, աղօթքի մէջ, այլ ոչ թէ բարի գործին մէջ վատը տեսնելով ու շեփոթելով:

Մեր ազգի քնարական հերոս Դանիէլ Վարուժան իր «Անդաստան» բանաստեղծութեան մէջ յայտնած է՝

Արեւելեան կողմն աշխարհի խաղաղութիւն թող ըլլայ...

Ո՛չ արիւններ, քրտինք հոսին, ու երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի՝

Օրհներգութի՛ւն թող ըլլայ:

Բոլորս ականատես կը դառնանք, թէ համայն աշխարհի մէջ, մեր շուրջ բոլորը, ամէն ինչ փոփոխութեան կ'ենթարկուի, նոյնիսկ քարտէսներ կը փոխուին, ոմանց համար դրական, ոմանց համար ալ բացասական արդիւնքներով: Թող որ մեր սրտերուն մէջ վառ մնայ վերադարձի յոյսը, որպէսզի մենք ալ ողջունենք այն օրուան վարդափառող արշաւոյսը:

Պէյրուս

ԱՊԱԳԻԱՅ ՀԱՐԱՊԱՐԵՐՈ

ՈՍԿԵԱՅ 50-րդ ՏԱՐԵԴԱՐՁ

Օրհնութեանք՝ զանաւորապէս թեմի առաջնորդ գերջ. Տ. Արքայր եպս. Յովակիմեանի

Հովանաւորութեանք՝ Գանատայի մօտ ՀՀ-ի յիւզօր եւ արտակարգ դեսպան Տիկ. Անահիտ Եարութիւնեանի

ԿԱԼԱ ՀԱՄԵՐԳ - ՀԱՇԿԵՐՈՅԹ

Շաբաթ՝ 1 Նոյեմբեր 2025, երեկ. ժամը 7-ին
Centre Arménie շքեղ սրահին մէջ:

Այս աննախադէպ երեկոն կը խանդավառէ՝
Հայաստանէն յատկապէս հրաւիրուած
տաղանդաշատ սիրուած երգչուհի

ՍՈՅԻ ՄԵՆՅԱՆ


Տոմսերը ապահովելու համար դիմել՝
Թէրեան Կեդրոն 514-747-6680
Պերճ Գոգորեան 514-983-4256

Մուտքի սակ՝ 125\$

Փարոսներ՝ միջնադարեան խաւարին մէջ

ԳԼԱԶՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՓԱՌՔԸ՝ ՈՒՍՈՒՑԶԱՊԵՏ ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ (ԺԳ. - ԺԴ. ԴԱՐ)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



Մեր նախորդ յօդուածով ըսած եղանք, թէ Սիւնեաց նահանգի Վայոց Ձոր գաւառի նշանաւոր Գլաձորի դարանոցին բուն հիմնադիրը Ներսէս Մշեցի վարդապետն էր։ Ան 1282-ին Տաթօնի աշխարհէն եկաւ Սիւնիք, Աղբերց կոչուած վանքը ուսումնակրթական կեդրոնի վերածեց ու անմիջապէս լծուեցաւ սերունդ պատրաստելու հայրենաճուրղ գործին։

Նախախնամութիւնը, սակայն, լայն պատեհութիւններ չընծայեց Ներսէս Մշեցիին։ Հազիւ գործերը հունի մէջ դրած ու իր վեհ առաքելութեան լծուած՝ Մշեցին վախճանեցաւ, 1284-ին։

Բայց գործին ապագայ ենթահողը պատրաստ էր արդէն։ Իրեն անմիջապէս յաջորդեց իր սիրելի աշակերտն ու լծակիցը՝ **Եսայի վրդ. Նչեցին**, որ անհատաւորի նուաճումներու նոր դարաշրջան մը պիտի բանար այդտեղ, Աղբերց վանքին մէջ։ **Դպրանոցը պիտի վերածուէր համալսարանի**, անկէկա պիտի վերամկրտուէր **Գլաձոր** անունով, իսկ ընծայաբերուած հունձքը,-- մարդո՛ւժը,-- պիտի գլէր անցնէր լաւատեսական բոլո՛ր սպասումները...։ Եսայի Նչեցի շուրջ կէս դար ոտքի պիտի պահէր համալսարան մը՝ Հայաստանի միջնադարեան խաւարապատ միջավայրին մէջ շողացնելով գիտութեան եւ մշակոյթի փարոս մը...։

Երուսաղէմ պահպանուած ձեռագրի մը մէջ կայ 1320-ական թուականներէն եկող շատ հետաքրքրական ու բացառիկ մանրանկար մը (գործ՝ Թորոս Սարկաւազի, տե՛ս կցուած լուսանկարը), ուր կը ներկայացուի Եսայի Նչեցին իր համալսարանի 42 ուսուցիչներուն եւ աւագ սաներուն հետ։ Պատկերը կը ներկայացընէ աւարտաճառի մը հրապարակային ներկայացումը։ Ուսուցչապետը բազմած է իր գահաւորակին վրայ, դասասացներն ու ուսանողները խմբուած են կողք-կողքի, իսկ սաներէն մին, կեդրոնը, գրակալի մը առջեւ, կը կատարէ իր ատենախօսութիւնը...։

Նչեցիի շրջանին Պոռշեան իշխանները (որոնք անմիջական տէրերն էին Վայոց Ձորին) տեսաբար շարունակէր են հովանաւորել Գլաձորի վանքն ու համալսարանը եւ երաշխատել անոր ապահով գոյատեւումը։ Նիւթական մատակարարումի տեսակէտէ՝ խիստ պատասխանատու գործ էր այս։ Վանքին մեծաթիւ սաները կու գային ոչ միայն Արեւելեան Հայաստանի գաւառներէն, այլեւ Տաթօնէն, Երզնկայէն ու մինչեւ իսկ հեռաւոր Կիլիկիայէն։ Ասոնք բոլորը, ամէն բանէ առաջ, հարկ էր կտրակրէ...։ Պոռշեանները, ահաւասիկ, չէին զլանար իրենց նիւթաբարոյական հովանին եկեղեցական ու կրթական այս գմայլելի օճախին։ Օրբելեան իշխանները եւս, որոնք ընդհանուր տէրերն էին Սիւնեաց աշխարհին, չէին սակարկէր իրենց հովանաւորութիւնը. կը կատարէին շինութիւններ, գոհացում կու տային անհրաժեշտ պահանջներու։ Իսկ հոգեւոր գետնի վրայ՝ Գլաձորը կը հովանաւորուէր Սիւնեաց եպիսկոպոսական աթոռէն։

Եսայի Նչեցիի օրով Գլաձորի մէջ դասաւանդուած են «եօթը ազատ արեւստներ»-ը՝ քերականութիւն, ճարտասանութիւն (գեղեցիկ քարոզելու արուեստը), տրամաբանութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, աստղաբաշխութիւն եւ երաժշտութիւն։ Համալսարանի դասացուցակը ընդգրկէր է նաեւ աստուածաբանութիւն (Հին եւ Նոր Կտակարաններու մեկնութիւն), պատմագիտութիւն, բնագիտութիւն, փիլիսոփայութիւն եւ տոմարագիտութիւն։ Դասաւանդութիւնը կատարուած է միշտ հայերէնով։ Դասաւանդութեան տեւողութիւնը եղած է 7-8 տարի։ Առարկաները ունեցած են իրենց յատուկ դասագիրքերը, ոճանք՝ հայ հեղինակներու գործեր, ոճանք՝ թարգմանածոյ։ Ուսումնական այս համապարփակ համակարգին մասին մանրամասն անդրադարձած է պատմագէտ Աշոտ Գ. Աբրահամեան իր «**Գլաձորի համալսարանը**» հատորով (Երեւան, 1983)։

Նկատի ունենալով այս ամբողջը՝ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի երբեմնի տնօրէն փրոֆ. Լեւոն Խաչիկեան (1918-1982) չէ վարանած բաղդատութիւն մը ընելու ընդմէջ Գլաձորի ու Երոպայի միջնադարեան համալսարաններուն, գիտաւորամական ծրագրի ու մակարդակի տեսակէտէ։ Ան կը գրէ.

-- **Գլաձորի համալսարանը յառնում է մեր առաջ որպէ՛ս ուսումնական մի հաստատութիւն, որ հիմնադրուած լինելով ամենահին համալսարանից (Փրակ) շուրջ ութսուն տարի առաջ եւ համարեա՛ հասակակից լինելով եւրոպական գիտական մտքի ամենահեղինակատը հաստատութիւններից մէկին՝ Փարիզի համալսարանին, մրցում է նրա հետ թէ՛ իր կատարած կուլտուր-կրթական դերով, թէ՛ բոլոր մատենագրական հարուստ ժառանգութեամբ եւ թէ՛ դասաւանդուած գիտութիւնների բազմազանութեամբ եւ խորութեամբ («Գլաձորի համալսարանը եւ նրա սաների աւարտական ատենախօսութիւնները», Երեւանի պետ. համալսարանի գիտական աշխատութիւններ, ԻԳ. հատոր, 1946)։ Ի՛նչ խօսք, որ ակնարկուած դարաշրջանին մինչ Երոպան ընկերային-քաղաքական բարենպաստ պայմաններու մէջ կը դիմէր դէպի իր Վերածնունդը, անդին՝ Հայաստան աշխարհը ոտնակոխ կ'ըլլար վայրենի ցեղերու ծանր կրունկներուն տակ...։**

Ժամանակակիցները Եսայի Նչեցին կոչած են «եռամեծ փիլիսոփայ», «անյաղթ հռետոր»։ Ընթացիկ ուսումնառութենէն անկախ՝ ան գործի մղած է իր սաները գիրքեր բազմապատկելու, երբեմն նաեւ զանոնք ծաղկազարդելու մանրանկարչական արուեստով։ Գրիչն ու մատեանը Նչեցիի առօրեային մէջ եղած են մնայուն ներկայութիւն եւ ապրում։ Ան տեսաբար գիրք պատուիրած կամ գիրք ստացած է։ Ի՛նք եւս զբաղած է գրչութեամբ, խմբագրութեամբ եւ սրբագրութեամբ։



ԼՆԻՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (*sharoyanlevon@gmail.com*)

Իդէպ, Գլաձորի վանքը ուշագրաւ ներդրում ունեցած է մանրանկարչութեան մարզին մէջ եւս։ Հայրենի արուեստաբան ու գեղանկարիչ Արամ Աւետիսեանի «**Հայկական մանրանկարչութեան Գլաձորի դպրոցը**» հատորը (Երեւան, 1971) լուսարձակ կը բանայ անոր վրայ։

Նչեցի Գլաձորի մէջ ունեցած է անշուշտ հոյլ մը օժանդակ րաբրոնապետեր, որոնց գլխատըր կը հանդիսանայ **Դաւիթ Սասնեցին**։ Ձեռագրական վկայութիւններու քննութիւնը կը հաստատէ, թէ ան երկրորդ լիագոր ուսուցչապետն էր Գլաձորի համալսարանին մէջ, Նչեցիէն ետք։ Ան միաժամանակ եղած է **Վերին Նորավանքի** (Վայոց Ձոր) առաջնորդը եւ գլխատըրած է տեղւոյն դպրոցը։ Անոր մահուան թուական կը ճշդուի 1329-ն։

ԻՆՉ ԳՈՐԾԵՐ ԱՐՏԱԴՐԱԾ Է ՆՉԵՑԻՆ

Նչեցիի թողած մատենագրական գրաւոր վաստակը ճիշդ պիտի ըլլար բաժնել երեք խմբաւորումի.

ա) Աստուածաբանական-մեկնաբանական աշխատութիւններ, որոնց մէջ աչքի կը զարնէ յատկապէս «**Մեկնութիւն Եզեկիէլի**»-ն, որ գլուխ հանուած է հայ թէ օտար բազմաթիւ սկզբնաղբիւրներու օգտագործումով ու համադրումով (1302 թ.)։ Այս մասին քննական մանրակրկիտ աշխատանք տարած ու արտայայտուած է Գարեգին կթղ. Յովսէփեանց իր «**Ճաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ**» գործով (Անթիլիաս, 1969)։

բ) Դասանաբանական թուղթեր, շրջաբերականներ եւ քարոզներ, որոնք յաճախ գրի առնուած են իբրեւ հակազդեցութիւն ժամանակաշրջանի ունիթոռական (միաբարական) շարժումին ու անկէ բխած մերժելի գաղափարներու։ Նչեցի եղած է հակամիաբարական պայքարի աննկուն դրօշակիր մը, նոյնիսկ՝ այդ պայքարին տեսաբանն ու կազմակերպիչը։ Ան իր ստորագրութիւնը դրած է Արեւելեան Վարդապետներու կողմէ Կիլիկիոյ լատինամետ հայ կաթողիկոսներուն (Գրիգոր Անուարգեցի, Կոստանդին Գ. Կեսարացի) ուղղեալ քննադատական թուղթերուն տակ։ Ըստ Յովսէփեանց կաթողիկոսի՝ «չլինէր Նչեցին իւր դպրոցով, շատ աւելի մեծ չափով վտանգուած կը լինէր հայոց եկեղեցու անկախութեան խնդիրը» («**Ճաղրակեանք կամ Պոռշեանք**»)։

գ) Քերականական մեկնութիւն. Նչեցի քերականութիւնը համարած է «դուռն ամենայն իմաստասիրութեան եւ կրթութեան»։ Իր պատրաստած «**Վերլուծութիւն քերականութեան**»-ը միջնադարուն օգտագործուած է իբրեւ դասագիրք։ Անկէկա հրատարակուած է Երեւան, 1966-ին, քննական բնագրով ու պատմաբանասիրական ծանօթագրութիւններով։

Եսայի Նչեցի լայն ծանօթութիւն ունեցած է նախընթաց շրջանի հայ մատենագրութեան թէ՛ ինքնագիր եւ թէ՛ թարգմանեալ երկերուն մասին եւ աղբիւրագէտի մը հմտութեամբ օգտուած է ատոնցմէ։

Բայց, այնուամենայնիւ, ճիշդ պիտի ըլլայ Եսայի Նչեցիի դիմագծութիւնը պատկերել հիմնուելով սոսկ իր գրաւոր վաստակին վրայ, որ այնքան ալ ծաւալուն ու մեծակշիռ չէ։ Նչեցիի բուն արժէքը պէտք է փնտռել իր «բանաւոր» (ոչ-գրաւոր) վաստակին մէջ, որ կը կայանար համալսարան հիմնելու ու աւելի քան կէս դար զայն անխափան գործուն պահելու եւ ղեկավարելու սխարանքին մէջ։

Եթէ քիչ մը խորանանք Նչեցիի այս իրապէս բացառիկ սխարանքին մանրամասնութիւններուն մէջ, նախ պիտի շշմինք, իմանալով որ ան տասնեակ տարիներ այլազան առարկաներու շուրջ դասաւանդութիւններ կատարած է ձեռնհասօրէն ու անձանձոյթ, յետոյ պիտի հիանանք իր խմորած ու կոփած մեծաթիւ սաներուն վրայ, որոնք ուսումնական զարգացեալ սերունդ մը կը ներկայացընեն եւ որոնք կոչուած էին հայ մշակոյթի ջահը տանելու դէպի ապագայ տասնամեակներ...։ Երախտարժան ու անգնահատելի ծառայութիւն մըն էր այս, որ շա՛տ աւելի կ'արժէր՝ քան մատենագրական քանի մը գործերու գրառումը, որովհետեւ պէտք է մտահան ընել, որ Նչեցիի պատրաստած մտաւորական վարդապետներու փաղանգը տեղ-տեղ հիմնադիրը եղաւ ուսումնագիտական նոր կեդրոններու, վանական նոր օճախներու։

Նչեցիի կերպարը հմայած է հայ բանասէրները դարեր շարունակ։ Ձեռագրերու մէջ երեւցող անոր մանրանկարային դիմանկարներն անգամ (թիւով 4 հատ) ուսումնասիրութեան նիւթ դարձած են երբեմն։

Հռչակաւոր բաբունապետը վախճանած է 1338-ին ու թաղուած ի Գլաձոր, իր ուսուցչին՝ Ներսէս Մշեցիի շիրիմին մօտ։ Դժբախտաբար, սակայն, երկու ուսուցչապետերուն ալ շիրիմները անհետ կորսուեւ են։ Գարեգին վրդ. Յովսէփեանց նկատել տուած է առիթով մը, թէ երբ 1898-ին խումբ մը ճեմարանականներու հետ այցելեց Գլաձորի աւերակները, որոնց մէջ Նչեցիի ու Նչեցիի դամբանաքարերը, բայց ոչ մէկ հետքի հանդիպեցաւ...։

Իր մահով՝ ընդմիշտ պիտի դադրէր գործելէ Գլաձորի համալսարանն ալ, որովհետեւ Հայաստանի քաղաքական նոր իրավիճակը բացասական ազդեցութիւն պիտի գործէր վանքին վրայ, ապա նաեւ՝ պիտի տկարանային ու ջրանային զայն հովանաւորող Օրբելեան ու Պոռշեան իշխանական տուներն ալ, հետեւաբար՝ համալսարանին գոյատեւումը պիտի դառնար անկարելի։

Բարեբախտաբար, սակայն, անոր ճրագը պիտի փոխադրուէր այլ տեղ։ Գլաձորի րաբրոնիները, կարճապէս ժամանակով, իրենց սիրելի համալսարանին դռները բաց պիտի պահէին մերթ չերմոնի (Վայոց Ձորի շրջան, Տիրատուր Կիլիկեցիի գլխատըրութեամբ, մինչեւ 1356), մերթ Որոտանի (Սիւնիք, Յովհան Որոտնեցիի գլխատըրութեամբ, մինչեւ 1384) ու մերթ Ապրակունեաց (Երնջակ գաւառ, 1386-էն սկսեալ) վանքերուն մէջ, մինչեւ որ գտնէին իրենց համար ամենէն ապահով կայքը՝ **Տաթեւ**։ Այստեղ, Սիւնիքի լեռնագագաթներուն վրայ, նախ Որոտնեցիի եւ ապա Գրիգոր Տաթեւացիի գլխատըրութեամբ, համեմատաբար աւելի խաղաղ պայմաններու մէջ կեանքի պիտի կոչուէր նոր օճախ մը՝ **Տաթեւի համալսարանը**. Գլաձորի փակուած համալսարանին նոյն աւանդոյթներով ու համակարգով...։ Այս ալ, իր կարգին, անխափան պիտի գոյատեւէր մինչեւ 1435 թուական։ Հետեւաբար, «**միջնադարեան Հայաստանում քաթար-մոնղոլական, լենկքիմուրեան, այլեւայլ ցեղերի ու բռնակալութիւնների պատերազմների, ատերածութիւնների, դասանաբանական նկրտումների պայմաններում հայոց համալսարանի հարիւր յիսունամեայ գոյութիւնը հերոսութիւն էր**», կը գրէ հայրենի ձեռագրագէտ Արտաշէս Մաթեոսեան (1922-2004) իր ուսումնասիրութիւններէն մէկուն մէջ։

Եսայի Նչեցիով լայնօրէն զբաղած է հայրենի բանասէր փրոֆ. Լեւոն Խաչերեանն ալ, որուն «**Եսայի Նչեցին եւ Գլաձորի համալսարանը**» ծաւալուն մենագրութիւնը լոյս տեսած է Լոս Անճելըս, 1988-ին։

Հայէպ

ԹԻՖԼԻՍԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՔԸ –

ՀԱՅՈՑ ՀՈԳԵԻՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԱԳԱՅ ՎՐԱՑԱԿԱՆԱՑՈՒՄԸ


Թիֆլիս ժամանեցի երեկոյեան ժամերուն: Չեմ գիտեր ինչո՞ւ համար թաքսիին վարորդը մայրուղիէն շեղելով նախընտրեց զիս քաղաք հասցնել ներքին ճամբաներով: Խցանում էր. հաւանաբար մայրուղիէն շեղելով շատ մը վարորդներ նոյն քայլին դիմած էին՝ թերեւս այնտեղ յառաջացած աւելի ծանր խճողումէ մը խոյս տալու համար: Մեքենային լուսամուտներէն լարուած դիտելով՝ հայեացքս կը փորձէր որսալ, թէ ժամանակը ինչպիսի՞ նոր հետքեր ձգած, իսկ քաղաքաշինութիւնը ի՞նչ փոփոխութիւններ կրնար ըրած ըլլալ թաղերուն, շէնքերուն, անոնց տակի խանութներուն, թէ կուզ մարդոց դէմքերուն վրայ: Կարօտի եւ հետաքրքրութեան անօրինակ զգացում մը համակած էր զիս, մինչ հարցումներու տարափ մը կը խուժէր միտքս՝ արդեօք որքանո՞վ կրնար քաղաքը արդիականացած ըլլալ եւ ինչքանո՞վ պահպանուած էր դիմագիծը այն քաղաքին, ուր տարիներ առաջ գտնուած էի:

Յիշողութիւնս կը սաւառներ դէպի հեռաւոր անցեալը՝ 1977 թուականի ամառը, երբ ես տակաւին նոր ձեռնադրուած սարկաւագ, խնդրանքովը այդ ժամանակուան վիրահայտց թեմի առաջնորդ տ. Գեորգ արք. Մէրայտարեանի եւ մասնաւոր տնօրինութեամբը Վազգէն Ա. վեհափառ հայրապետին, նշանակուեցայ Թիֆլիսի առաջնորդանիստ Ս. Գեորգ եկեղեցիին եւ անոր առնչուած ծովսեւան ծառայելու՝ մինչեւ Մայր աթոռ Ս. Էջմիածնի Հոգեւոր Անմարանի ուսումնական տարեշրջանի վերամուտը: Այդ ժամանակէն ի վեր անցած է քառասունութ տարի. տարիներ, որոնց վրայ արդէն պատած է աղօտագոյն մշուշ մը: Բայց այն, որ այդ շուրջ երկու ամիսներուն ընթացքին ձեռք բերուած էր, կը կազմէ հարուստ փորձառութիւն մը՝ միախառնուած մերթ ուրախ եւ մերթ դժուար պահերու յիշատակներով:

Հետեւեալ առաւոյն այցելութիւններու ցանկին մէջ առաջնահերթութիւնը կովկասեան այս հռչակաւոր քաղաքին տեսարժան վայրերը չէին, որոնցմով ստոյգ կը հրապուրուէին զբօսաշրջիկներ, ոչ իսկ այն առաջնորդանիստ Ս. Գեորգ եկեղեցին, ուր ծառայած էի, այլ ճամբան կը տանէր զիս դէպի ատենին գերազանցապէս հայերով բնակուած Սողոմալ թաղամասի բարձունքը՝ Բերթեհեմի թիւ 3 հասցէն, ուր կը գտնուի քրիստոնէութեան անդրանիկ մարտիրոսի եւ նախասարկաւագի անուան ձօնուած Ս. Ստեփանոս հայ կուսանաց անապատն ու եկեղեցին: Տակաւին մինչեւ Ի. դարու 20-ական թուականները այստեղ ապրած էին տասնեակ հայ միանձնուհիներ, որոնք աշխարհէ հրաժարելով իրենց կեանքը նուիրած էին աղօթքի ու Աստուծոյ գովաբանութեան: Այդ կուսաններէն շատեր ձեռնադրուած էին սարկաւագուհիներ, իսկ վանամայրերը՝ աւագ սարկաւագուհիներ, որոնք միաժամանակ իշխանութիւն ունէին կրելու լանջախաչ, մատանի եւ հովուական գաւազան: Նուիրական աւանդութիւն մը, որ իր սրբազան ծոցին մէջ հաւատարմօրէն պահպանած է Հայ եկեղեցին մինչեւ այսօր:

Բարձրագայ Սողոմալի բարձունքով եւ կանգ առի եկեղեցիին մուտքին առջեւ: Սիրտս կը տրոփէր ու անասելի յուզում մը կը համակէր ամբողջ էութիւնս: Արդեօք ի՞նչ վիճակի մէջ պիտի գտնէի հայ կուսանաց եկեղեցին ու վանքը: Պատմութիւն մը, որուն անդրադարձած եմ համազանգօրէն՝ ձօնելով հատոր մը «Հայ եկեղեցւոյ սարկաւագուհիները»^[1] խորագրով: Անոնց սրբակրօն կերպարը ներշնչած է զիս: Աղօթքներու մէջ խնդրած եմ իրենց բարեխօսութիւնը: Իսկ հիմա՝ կանգնած այն եկեղեցիին առջեւ, ուր հայ կուսանները նուիրուով ապրած, հոգեւոր առաքելութիւն ծաւալած, ճգնած եւ անձկագին խնդրած են մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Բրիստոսն մեր մեղքերու քաւութեան համար, կը տեսնեմ բոլորովին այլափոխուած, բառին բուն իմաստով նենգափոխուած կերպարանքով: Արդարեւ, անձամբ կը դառնայի վկան մշակութային այն եղեռնին, զոր իրագործած էր Վրաց պետական քաղաքականութիւնը: Արդեօք կարելի՞ էր փնտռել իմաստ մը անիմաստին, տրամաբանականը՝ անտրամաբանականին մէջ: Հարցը կը մնայ անպատասխան. բարբարոսութիւն, բայց ինչո՞ւ համար... Ինչպէ՞ս կարելի է քոյր եկեղեցիի մը հոգեւոր ժառանգութեան հանդէպ նման վերաբերմունքը համատեղել նոյն հաւատքի աւանդոյթը դաւանողներու քրիստոնէական ինքնագիտակցութեան հետ:

Հայ կուսաններու այս վանքը 1724/27 թուականներուն կառուցել տուած է Մելիք Աղաբէկ Բեհրութեանցը՝ իրագործելով իր հօր՝ իշխան Աշարիբէկ Բեհրութեանցի անկատար մնացած ցանկութիւնը: Աշարիբէկ Բեհրութեանց ուզած էր Նոր Զուղայի Ս. Կատարինէ վանքի օրինակին հետեւողութեամբ, անոր հիմ-



Ս. Ստեփանոս եկեղեցին իր պատմական տեսքով




Եկեղեցւոյ գմբէթին շուրջը բոլոր գտնուող սրբուհիներու նախկին զարդաքանդակները

նադրումէն շուրջ դար մը ետք, նմանը իրականացնել Թիֆլիսի իր կալուածներուն վրայ: Այդ ժամանակ մարդիկ ունէին հաւատք, գոյութեանական արժէքներու առնչուած ըլլալու գիտակցութիւն, խորհուրդի հանդէպ զգացողութիւն, իրենց կեանքը հոգեւոր ապրումներով իմաստաւորելու ցանկութիւն, եւ ամենակարեւորը՝ ամբողջանուէր ուխտ կատարելու պատրաստականութիւն, որ իրենց էութեան եւ քրիստոնէական ինքնութեան անբաժանելի մասը կը կազմէր:

Կուսաստանի առաջին վանամայր կը հանդիսանայ քոյր Գայիանէ Բեհրութեանցը՝ կուսանաց-անապատի հիմնադիր բարերարին դուստրը: Ապա անոր կը յաջորդէին Եւփիմէ Բեհրութեանցն ու Կատարինէ Արդուրութեանցը, որ քեռաղջիկն էր Յովսէփ արք. Երկայնաբազուկ Արդուրեանցին՝ հոգեւոր առաջնորդը համայն ռուսահայոց եւ Նոր Նախիջեւանի թեմի: Այս վանքը շուրջ իր հարիւր տարիներու պատմութեան ընթացքին եղած է բազմաթիւ հայ միանձնուհիներու մենաստան, ան ունեցած է իր փառքի օրերը, երբ տակաւին անոր վերջին վանամայրն էր իշխանուհի Հռիփսիմէ աւագ սարկաւագուհի Աղեք-Թահիրեանցը: Անկշռելիօրէն մեծ եղած է այս միանձնուհիներուն հոգեւոր ներդրումը Հայց. առաք. եկեղեցւոյ պատմութեան մէջ, նամանաւանդ այն փաստին համար, որ անոնցմէ շատեր եղած են, ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, ձեռնադրուած սարկաւագուհիներ՝ տալով գերազանց վկայութիւն մը կանանց հանդէպ Հայ եկեղեցւոյ պատմականօրէն ցուցաբերած հանդուրժողութեան ոգիին եւ որդեգրած իրաւահաւասարութեան սկզբունքին մասին:

Տարածք քայքայեալ բարձրագայ եկեղեցւոյ հիւսիսային մուտքի աստիճաններէն: Մուտքի դուռը փակ էր: Պաղ սարսուտ մը սահեցաւ մարմնէս: Արդեօք գալու յանձնառութիւնս ի զո՞ւր էր: Բարեբախտաբար նկատեցի, որ եկեղեցիին արեւմտեան կողմը երկաթեայ ցանցերով փակ բնակարանման կառոյց մը կար, ուր վանական սեւաթոյր ծածկոյթներով միանձնուհի մը պատշգամբին վրայ գտնուող ծաղիկները կը ջրէր: Մօտենալով՝ ամուր թակեցի դուռը եւ անգլերէնով հասկցուցի, թէ ուխտաւոր մըն եմ եւ եկեղեցի եկած եմ աղօթելու: Թէեւ դժկամութեամբ, բայց յօժարեցաւ բանալու դուռը եւ ես ամենայն երկիւղածութեամբ ներս մտնելով՝ եկեղեցւոյ նաւին ճիշդ կեդրոնը ծուկի եկայ՝ ուղղելով դէմքս դէպի խորանը: Հայկական աւանդութենէն ոչինչ մնացած էր: Դիտումնաւոր իսպառ քանդած էին զայն եւ տեղը գետեղած աղօթարարի խորանէն անջատող սրբապատկերներով զարդարուած փայտէ միջնորմ մը, այսպէս կոչուած «իկոնոստաս – ikonosostas» մը: Խորանին շուրջը բոլոր, եկեղեցւոյ գմբէթին ներքնամասը, կամարները եւ բոլոր պատերը պատկերազարդած էին Բրիստոսի, Աստուածամօր, առաքեալներու, բազմաթիւ սուրբերու եւ սրբուհիներու որմնանկարներով, բայց ոչ մէկ տեղ կարելի եղաւ նշարել Ս. Ստեփանոս նախասարկաւագի սրբանկարը. պարզ է, որպէսզի ան կատարուած չարափոխութեան վերաբերեալ որեւէ կասկածի տեղիք չտայ կամ այցելուներու մտքին մէջ չթարմացնէ այն նուիրական անունը, որուն իր հիմնարկէքի օրերուն ձօնուած էր եկեղեցին: Այժմ եկեղեցին բռնազբօսիկ կը կոչուի Բուենձո Բերթեհեմի (Ներքին Բերթեհեմ), որովհետեւ եկեղեցիէն քարընկէց հեռու բարձունքի վրայ կը գտնուի Վերին Բերթեհեմի (Զեմօ Բերթեհեմի) անունով այլ եկեղեցի մը, որ, ի միջի այլոց, վրացականացումէ առաջ, նոյնպէս եղած էր հայկական: Գռեհկութիւն, անունը կրօնական մոլեռանդութիւն է, ստոյգ, թէկուզ քրիստոնէական:

Վրաստանի մէջ 1921 թուականին խորհրդային բռնադատութեան հաստատումէն ետք, համայնավար իշխանութեան ծաւալած անաստ-ւածութեան եւ հակակրօնական բիրտ քարոզարշաւին զոհ կը դառնայ նաեւ Կուսանաց Ս. Ստեփանոսի վանքը: 1924 թուականի օգոստոսին ան բռնութեամբ կը փակուի, իսկ միանձնուհիները կը կորսնցնեն իրենց հոգեւոր հայրենիքը, վանական կեանքը կը դադրի, իսկ հայ կուսաններու աղօթամրմունջ ձայնը եկեղեցւոյ խնկաբոյր կամարներուն տակ կը մատնուի ի սպառ լռութեան: Սակայն Ս. Ստեփանոս վանքի վախճանը միայն խորհրդային բռնաճնշումներուն պատճառով չէր: Յաջորդող տասնամեակներու ընթացքին վանքի եկեղեցին ծանրակշիռ փոփոխութիւններու կ'ենթարկուի իր ճարտարապետական հայաբոյր յղացքին, էութեան, նաեւ յիշողութեան մէջ: Այս մասին կ'արժէ դիմել մասնագիտական զոյգ մէջբերումներու՝ օգտուելով հայրենի յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանի արժէքաւոր հատորէն:



Եկեղեցին՝ այլափոխուած գմբէթով



Եկեղեցին՝ արդի տեսքով, մշակութային եղեռնի մը լուռ վկան

[1] Մանուկեան, Արթ. «Հայ եկեղեցւոյ սարկաւագուհիները», Պելյուք, 2022: Նոյնը արեւելահայերէն՝ «Հայ եկեղեցու սարկաւագուհիները», Երևան, 2023, նաեւ անգլերէն թարգմանութեամբ՝ Manoukian, Abel, “The Deaconesses of the Armenian Church”, Münster, 2024:

ՏԻԿԻՆ ԱՐԵՒ ՄՈՒՏԵԱՆԻ ՎԻՃԱԿԸ. ԿԸ ՃԱՆՉՆԱ՞Ք ՁԻՆՔ

Արեւմտահայերէնի պահպանման եւ կենսունակութեան շուրջ յառաջացած մարտահրաւերները աւելի ու աւելի հրատապ դարձած են վերջին տասնամեակին: Յատկապէս երբ ԵՈՒՆԵՍԿՕ-ն 2010-ին արեւմտահայերէնը դասեց «վտանգուած» լեզուներու կարգին, սփիւռքի մէջ անոր ապագան դարձաւ գլխատու քննարկման նիւթ: Համայնքային առաջնորդներ, դաստիարակներ, մասնագէտներ եւ ակադեմականներ սկսան միջոցներ եւ ծրագիրներ որոնել դիմագրաւելու լեզուի անկումը:

Անշուշտ, այս խնդիրը միայն լեզուի կորուստի մասին չէ. ան մաս կը կազմէ աւելի խորքային առաջադրանքի մը՝ կապուած ինքնութեան պահպանման հրամայականին՝ համաշխարհայնացման, գաղթի եւ ձուլման ճնշումներուն տակ, որոնք շարունակ կը ձեւաւորեն Սփիւռքի հայ իրականութիւնը:

Արեւմտահայերէն խօսողներու նուազող թիւէն բացի, քանի մը այլ գործօններ եւս կը նպաստեն անոր աստիճանական անկման: Օրինակ՝ հայերէնը սկսած է դադրիլ վարչական գործունեութեան լեզուն ըլլալէ սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւններու կը գործեն երկլեզու ձեւով: Միեւնոյն ատեն, Արեւմտահայերէն թերթերն ու մամուլը՝ որոնք երկար ատեն սփիւռքի մէջ լեզուական կենսունակութեան հիմնասիւններէն եղած են, օրէ օր կը տկարանան: Օրաթերթերը ընթերցողներ կը կորսնցնեն, կը տառապին ֆինանսական ասիմանափակումներէ եւ բովանդակութիւն արտադրելու հսկայական մարտահրաւերներէ: Այսօր, ամբողջ Սփիւռքի մէջ միայն փոքր թիւով Արեւմտահայերէն օրաթերթ կ'ընթացէ: Եւ շարքաթերթ կը շարունակեն հրատարակուիլ, մեծ մասամբ թուային եւ հազուագիւտ տպուած տարբերակով:

Արեւմտահայերէնի այժմու վիճակը եւ «լուծումներու» մօտեցումները պատկերացնելու համար, փորձենք երեւակայել Տիկին Արեւ Մուտեան մը՝ ժամանակին շողուն ու վառ կին մը, որուն զուարթ երանքները կը վիճին, թէ ինչպէս կրնան խնամել զինք: Կան տարբեր խումբեր, որոնք կը հոգան կամ մտահոգ են անոր ճակատագրով:

1. Մաքրակրօնները («Purist-ները»)

Առաջին խումբը կը կազմեն մաքրակրօնները՝ արեւմտահայերէնի ինքնակոչ պաշտպանները, մարտիկներն ու ոստիկանները: Այս մտաւորականները մեծ մասամբ Միջին Արեւելքի սփիւռքեան միջակայքին մէջ թրծուած են: Անոնք կը տեսնեն իրենց առաքելութիւնը որպէս «սուրբ պարտաւորութիւն» մը՝ պաշտպանելու եւ պահպանելու լեզուն «արեւմտահայերէնի վերջին կաթիլը»:

Այս խումբին համար Տիկին Արեւին վիճակը չափազանց ծանր է: Ան կը գտնուի հիւանդանոցի յատուկ վերակենդանացման բաժանմունքին մէջ, շնչառական խողովակի մը միացուած, գրեթէ հոգեվարքի մէջ: Purist-ները կը գանգատին սփիւռքեան հաստատութիւններու անտարբերութենէն, որոնք, ըստ իրենց, ձախողած են զայն «փրկելու»: Անոնցմէ շատեր կը հաւատան, թէ Հայաստանի Հանրապետութիւնը կրնայ ըլլալ վերջին յոյսը:

Բայց, զնախադրելով հանդերձ անոնց մեծ նուիրումը, շատ գործնական լուծումներ չունին: Դպրոցներու եւ ուսուցիչներու ֆինանսաւորումը — այսինքն՝ «հիւանդանոցն ու բուժքոյրերը» — անբաւարար է: Անոնց պատասխանը հիմնականին մէջ պաշտպանողական է՝ պահել արեւմտահայերէնը այնպէս ինչպէս որ էր անցեալին, ըստ իրենց պատկերացումին: Անոնց համար իսկական հայը ան է, որ ամբողջովին կը մնանի Տիկին Արեւին՝ այնպէս ինչպէս եղած էր ան անցեալին՝ անփոփոխ եւ զերծ օտար ազդեցութիւններէ:

2. «Մտաւորական խմբակը»

Ճիշդ հակառակ ուղղութեամբ կը գտնուի աւելի ազատ եւ լայնախոհ մտաւորական խումբ մը՝ յառաջադէմ, աշխարհիկ, խորապէս կրթուած արեւմտահայերէնի գրական եւ փիլիսոփայական ասանդութեանց մէջ: Անոնց մտածողութիւնը եւ ուշադրութիւնը յաճախ կը կեդրոնանայ մեր ժամանակներու երկու-երեք մեծ գրական եւ մտաւորական նշանաւոր դէմքերու շուրջ:

Այս խումբին համար Տիկին Արեւը մահամերձ չէ. ան ուղղակի կը ծերանայ՝ ժամանակի եւ հանգամանքներու ազդեցութեամբ: Ան հիւանդանոցի կարիք չունի, բայց պէտք ունի նուրբ, սիրառատ

խնամքի՝ իր հասուն զուակներուն ուշադրութեան, որոնք տակաւին տան մէջ կը խօսին իր հետ:

Այս խումբին հեռանկարը վերկենսաւորում է. մշակութային է, ոչ բժշկական: Անոնք շեշտը կը



դնեն գրականութեան, ինքնաքննութեան եւ փիլիսոփայական նորոգութեան վրայ: Բայց անոնց ազդեցութիւնը կը մնայ նեղ շրջանակներու մէջ՝ հազուադէպօրէն շփուելով մաքրակրօններու կամ այլ յարակից մասնագէտներու հետ:

Նշուած երկու խումբերն ալ, ի վերջոյ, հակադիր խրամատներու մէջ կը գտնուին՝ իրաքանչիւրը համոզուած թէ ինք միայն գիտէ Տիկին Արեւը փրկելու ձեւը:

3. Նոր Մերումը

Այս երկու խումբերուն միջեւ կանգնած է նոր սերունդ մը՝ տարիքով քսանէն երեսուններու միջեւ հայ երիտասարդներ, որոնք կը փորձարկեն նոր ձեւեր՝ կենսունակ պահելու արեւմտահայերէնը: Անոնք ոչ մաքրակրօն են, ոչ ալ աւանդապաշտ մտաւորականներ: Անոնց նուիրումը Տիկին Արեւին անկեղծ է, բայց անոնց գործելակերպը՝ ստեղծագործական, երբեմն խաղով ու արդի:

Այս սերունդը իր սերը լեզուին հանդէպ կը ցուցաբերէ թուային մշակոյթով՝ փոռքասքեր, YouTube ալիքներ, memes, առցանց հարթակներ եւ ընկերային ցանցեր: Հաստատութեանական իշխանութիւն չունին, բայց ունին տեսանելիութիւն, աշխուժութիւն եւ բնագոյային գիտակցութիւն, թէ արեւմտահայերէնը պէտք է ապրի այնպէս ինչպէս որ ան է այսօր, ոչ թէ ինչպէս որ եղած էր:

ԴՊՐԵՎԱՆՔԻ «ԳԼԱՁՈՐ» ՏԱՐԵԳԻՐԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի «Գլաձոր» տարեգիրքը վերստին լոյս կը տեսնէ՝ վեցամեայ ակամայ դադարէ մը ետք:

1957 թուականէն սկսեալ, «Գլաձոր» կը հանդիսանայ Դպրեվանքի սաներու գրական, ուսումնասիրական եւ գեղարուեստական առաջին փորձերուն հանդէսը. հոն կ'արտացոլայ Դպրեվանքի իսկական ոգին՝ իր առօրեայով, առաքելութեամբ, աշխատանքով եւ հունձքերով: Անցնող վեց տարիները ամենեւին հեզընթաց չեղան. Լիբանանի տարբեր շրջաններու մէջ բողոքի ցոյցերը, տնտեսական տագնապը, աշխարհացունց թագաժախքը, Պէյրութի նաւահանգիստի ահաւոր պայթումը, արցախեան տխրահեշակ պատերազմը եւ Լիբանանի հարաւին անակնկալ գրոհները արգելք հանդիսացան, որ «Գլաձոր»-ի հետեւողական հրատարակութիւնները զգալիօրէն յամենան:

Հակառակ այս խառնակ վիճակին, դպրեվանքիներ Պիքֆայայի իրենց խաղաղիկ շէնքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազանգոյն Կաթողիկոսի հայրական հոգածութեան, տեսչութեան անմիջական գործադրանքին եւ ուսուցչաց կազմին անխնայ աշխատանքին շնորհիւ՝ իրենց հոգեմտաւոր աճն ու կրթանքը միեւնոյն թափով շարունակեցին ստանալ: Արդ, սաներուն մտաւորական արտադրութիւնները եւս կանգ չառին. եւ ահա, այս տարիներուն ընթացքին կուտակուելով՝ կազմած են արժէքաւոր ատաղձ մը: Դպրեվանքի համատեղ ջանքին պատկերը մարմնաւորուեցաւ ներկայ տարեգիրքին մէջ՝ շնորհիւ խմբագիր հայր սուրբերուն՝ Գեորգ Վրդ. Գարակէօզեանի եւ Աբրահամ Արդ. Ղուփայեանի անսակարկ ու տքնաջան աշխատանքին:

«Գլաձոր»-ի տոյն հատորը լոյս տեսաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Սուրբ Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մեսրոպ Ա. Քհնյ. Լազիսեանի եւ իր կողակիցին՝ երեցկին Էօծէն Լազիսեանի ազնիւ մեկեմատութեամբ, առ ի երախտագիտութիւն Կիլիկեան Դպրեվանքին եւ իբրեւ խրախուսանք՝ անոր տարած առաքելութեան: Անհուն շնորհակալութիւն այս օրհնեալ ամուլին:

Ահաւասիկ, «Գլաձոր»ը կրկին կը մատուցուի հայ ընթերցասէր հանրութեան: Ահա ձեր առջեւ Դպրեվանքը՝ իր իսկութեամբ, պարզութեամբ ու հարազատութեամբ: Ձեր առջեւ կը բացուին վերջին վեց տարիները. սա հաշուեյարդար մը չէ, այլ՝ պանծալի յուշարձան մը Դպրեվանքի առաքելութեան յաղթանակին:

ԴՈԿՏ. ՀՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Անոնց համար Տիկին Արեւը մեծ մայր է՝ գուցէ թոյլ, բայց սիրելի: Ան կարօտ է մտերմութեան աւելի քան պաշտպանութեան, աւելի զրոյցի քան սուգի: Թէ արդեօք այս սերունդը պիտի կարողանա՞յ երկարաժամկէտ ազդեցութիւն ունենալ կրթական կամ համայնքային կեանքի մէջ՝ տակաւին յստակ չէ: Բայց անոնց ներկայութիւնը անշուշտ նոր շունչ բերած է արեւմտահայերէնի ողիսականին:

4. Ուսուցիչները

Եւ կան ուսուցիչները՝ լեզուի ամենօրեայ պահապանները սփիւռքեան դպրոցներուն մէջ: Անոնք կը տարբերին բնաւորութեամբ՝ ոմանք խիստ պահպանողներ են, ուրիշներ՝ բաց նորարարութեան: Շատեր յաճախ կը գտնուին երկմտանքի մէջ՝ մաքրակրօններու պաշտպանողական դիրքին եւ մտաւորականներու մշակութային մօտեցումին միջեւ, եւ միաժամանակ կը փորձեն կապ հաստատել նոր թուային սերունդին հետ:

Վերակենդանացման Քաղաքականութիւնը

Նկատի ունենալով Սփիւռքի աւանդական հաստատութիւններու կողմէ լուրջ ծրագիրներու եւ ֆինանսաւորման պակասը, վերջին տարիներուն Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը՝ արեւմտահայերէնի ծրագիրներու ամենէն կարեւոր հովանաւորներէն մէկն է եւ մեծ ազդեցութիւն ունի հիմնական հարցերու քննարկումներուն մէջ: Կիւլպենկեանի տարբեր ծրագիրներու օժանդակութիւնը՝ գրական, թուային կամ մանկավարժական, ձեւաւորած է արեւմտահայերէնի գործնական ուղղութիւն մը: Բայց եւ այնպէս, ինչպէս որեւէ միջամբնութիւն՝ ոչ բոլորը համակարծիք են Կիւլպենկեանի տեսիլքին: Երբ լեզու մը ճգնաժամի մէջ է, նոյնիսկ բարի մտադրութիւն ունեցող օգնութիւնը կրնայ դառնալ վէճի աղբիւր:

Արեւմտահայերէնի պայքարը միայն քերականութեան կամ բառապաշարի հարց չէ. ան ինքնութեան, պատկանելիութեան եւ գոյատեւման խնդիր է: Տիկին Արեւը տարեց է, բայց ան կենդանի է: Ան կը շարունակէ ապրիլ՝ թէ ICU-ի մէջ, թէ տունը խնամուող, թէ առցանց ընկերացած: Ան կը շնչէ դասարաններու, գրականութեան եւ աւելի ու աւելի՝ նոր սերունդի թուային աշխարհին մէջ:

Անոր ապագան կախեալ է ոչ մէկ խումբի «յաղթանակէն», այլ բոլոր ժառանգորդներուն՝ մարտիկներու, մտածողներու եւ երագողներու միասնական ձայնէն, որոնք պէտք է վերագտնեն Տիկին Արեւ Մուտեանին միջոցով «խօսելու» եւ ստեղծագործելու կարողութիւնը:



ԱՄՆ-Ի ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՆԵՐԿԱՅԻ ԱՆՕՐԷՆ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՇԱՏԵԱՆ

ԱՄՆ-ի նախագահ Տոնրլո Թրամփ գործադրելով իր տերերուն տուած ցուցմունքները, կամ աւելի ճիշդ՝ հրամանները, ծաւալապաշտական կամ աշխարհակալական ձգտումներով արտայայտուեցաւ ամբողջ աշխարհի առջեւ, բոլորիս ծանօթ Գանատայի, Իսլանտայի, Կրիմլէնտի, Փանամայի, Վենեզուելայի եւայլն, ԱՄՆ-ին կցելու նպատակով եւ ԱՄՆ-ի սեփականութիւնը դարձնելու: Թշնամական յափշտակութեան բացայայտ վատ արարք մը, այնքա՛ն պարզ ու սառնասիրտ արտայայտութեամբ...

Վերոյիշեալ յայտարարութիւնը Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիահուի Մեծն Իսրայէլի կամ Նոր Միջին Արեւելքի իրագործման ձգտումներու յայտարարութեան կը ծառայէ իբրեւ նախադէպ, ան կը նսեմացնէ անոր ժխտական ազդեցութեան ուժգնութիւնը եւ զայն կը զրկէ իր վատ եզակիութենէն: Միջազգային հանրային կարծիքը այս հարցին նկատմամբ կ'արտայայտուի ամենայն պարզութեամբ, այնպէս ինչպէս կարծէք եղածը սովորական բան ըլլայ, «արդէն նման բան մը Թրամփին ալ յայտարարած էր...» ըսելով: Արդարեւ Նաթանիահուն «խիզախօրէն» յայտնեց թէ Իսրայէլի տարածքին պիտի կցէ Սուրիայէն, Լիբանանէն, Յորդանանէն, Եգիպտոսէն եւ Մետաական Արաբիայէն տարածքներ, մեծցնելու համար զայն, ինչպէս Թրամփ ալ նախադէպ ծառայող յայտարարութեամբ մը ըսած էր, թէ Իսրայէլի տարածքները շատ սահմանափակ են եւ պէտք է ընդլայնին:

Այլ յայտարարութիւն մը Իսրայէլի կողմէ, որ կը ձգտի Կազան ու Արեւմըտեան Ափը պարպել իր բնիկ պաղեստինցի ժողովուրդէն եւ զանոնք կցել Իսրայէլի: Այս ցանկութեան նախադէպը արդէն կատարուած էր 2023-ին Արցախի բռնագրաւումով Ատրպէյճանի բռնատէր համակարգին եւ բանակին կողմէ Իսրայէլի հսկայ օժանդակութեամբ, ինչպէս նաեւ վարձկան ուժերու: Արդարեւ, կասկած չկայ որ ի սկզբանէ անոր մօտեցումը եղած է Իսրայէլի եւ Թուրքիոյ հետ հսկայական մասնակցութեամբ եւ մասնագիտական զէնքերով բաժին վերցուցած էր, իբր նախադէպ ծառայեցնելու Կազայի մէջ ներկայիս եղածին:

Ճիշդ է թէ մինչեւ օրս դողողուն ձայներ Արեւմուտքի կամ Արեւելքի մէջ կը դատապարտեն Արցախի բռնագրաւումը եւ հարիւր քսան հազար հաշուող հայոց բռնազաւթը դէպի Հայաստանի Հանրապետութիւն, սակայն Իսրայէլ, Ատրպէյճան, Թուրքիա եւ այլ ուժեր փաստօրէն հետեւեալը կ'ըսեն. «Թող խօսին որքան որ կարելի է, սակայն արդէն ոչինչ կրնան ընել...»: Այս ծիրին մէջ եւրոպական ու ամերիկեան նոյնպէս դողողուն ձեռքերով խորհրդանշական նպատի փոքր գումարներ կը հասնին հայ գաղթականներուն, որոնք ոչ միայն հայրու անկոտորում կամքով կը պայքարին օրուան կենցաղային անընթացաւ պայմաններուն դէմ, այլ նաեւ իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն հայրենի պետական, ազգային եւ մշակութային կեանքին մէջ:

Անկախ ներկայիս տիրող մթնոլորտէն, արցախահայերը կ'ապրին ու կը շնչեն այն հաստատ համոզումով որ օր մը անպայման պիտի վերադառնան իրենց պապենական ու հայրենի բնօրրանը: Վերոյիշեցնելու կարգով ըսենք թէ Իսրայէլ 1991-էն սկսեալ յարաբերութիւններ ունի Ատրպէյճանի հետ ու այդ յարաբերութիւնները աստիճանաբար զարգացնելով հասած է բացառիկ յարաբերութեանց մակարդակին երկու դաշնակիցներու միջեւ: Իսրայէլ կ'օժտէ Ատրպէյճանը ամերիկեան նորագոյն զէնքերով փոխան բնական կազի եւ քարիտի, հակառակ այն իրողութեան որ Ատրպէյճան տակաւին լիիրաւ անդամ է Իսլամական Համագործակցութեան Կազմակերպութեան եւ պաղեստինեան Դաւիտի նեցակցող կը սեպուի:



Թոմսըն Պարաք

վարութիւնը պատասխանատու է»: Ահաւասիկ նախադէպ մը կը հաստատուի այն յայտարարութեան, որ շատ հաւանական է որ լսուի Իսրայէլի վարչապետին կամ որեւէ իսրայէլացի այլ բարձրաստիճան քաղաքագէտի մը բերնէն մօտիկ ապագային: Իսկ 23 Սեպտեմբեր 2025-ին, լիբանանեան բանակը զինելու եւ Իսրայէլի դէմ Լիբանանը պաշտպանելու իմաստով լիբանանցի թղթակիցներ երբ հարց տուին Թոմսըն Պարաքի, ան լիբանանցի թղթակիցներու յոյսերը յօդս ցնդեցնելով, ան պատասխանեց թէ խաղաղութիւն պիտի չըլլայ ու աւելցուց. «ԱՄՆ պիտի զինէ լիբանանեան բանակը որպէսզի Իսրայէլի» դէմ կռուի, չեմ կարծեր, այլ որպէսզի իր սեփական ժողովուրդին՝ Հըզպախաիի դէմ...»: Արդարեւ, քանի մը տասնեակներէ ի վեր, Լիբանանի թշնամի Իսրայէլն ու «քարեկամ» ԱՄՆ-ը սին երազներ փայփայած են լիբանանեան բանակ-Հըզպալա բախման յոյսերով...



«Մեծն Իսրայէլ» Երազը

Նախադէպ սարքելու նպատակը շեշտել է որոշ յայտարարութեան մը «իրաւացիութիւնը» եւ ձգել այն տպաւորութիւնը, թէ տոյն յայտարարութիւնը «չէզոք» միջնորդին կողմէ արտասանուած, խնդրոյ առարկայ հարցին ուղղակի երկու կողմերէն մէկուն՝ Իսրայէլի բարձրացնելիք հաւանական ամբաստանութիւնը կը կանխէ եւ զօրաւոր ձեռով կը հաստատէ զայն, իրբեւ «արդար» հաստատում: Հըզպալա կազմակերպութեան վերականգնման մասին Իսրայէլ տակաւին բառ մը չբարբառած, ահաւասիկ Թոմսըն Պարաք կը փութայ լիբանանեան պետութեան դէմ Իսրայէլի հետագայ հաւանական թշնամական արարքները արդարացնելու: Լիբանանեան ծագումով Թուրքիոյ մէջ ԱՄՆ-ի դեսպան այս անձը աւտենէ մը ի վեր Իսրայէլի պաշտպանութեան փաստաբանութիւնը կը կատարէ «չէզոք» միջնորդի ծպտումով: Այսպիսով ան ոչ միայն իր լիբանանեան ծագումին կը դաւաճանէ, այլ նաեւ՝ ամերիկեան պատկանելիութեան, որովհետեւ ըստ ամերիկեան ժողովրդային ընդդիմութեան ան ու անոր նմանները կը պաշտպանեն Իսրայէլի շահերը, ոտնակոխ ընելով ամերիկեան ազգային շահերը:

Պարաքի յայտարարութեան յաջորդ օրը՝ 23 Սեպտեմբեր 2025-ին, անոր խօսքերուն անդրադառնալով, Լիբանանի վարչապետ Նաուաֆ Սալամ ա-նակնկալի եկած յայտարարեց. «Կը զարմանամ Պարաքի յայտարարութեան, որ կառավարութեան լրջութեան ու բանակի դերին կը կասկածի»:

Նախապէս նոյն այս ամերիկացի քաղաքագէտը անարգած էր լիբանանցի թղթակիցները, անոնց վերաբերմունքը անասնական կոչելով: Արդարեւ ժողովի մը վերջաւորութեան, երբ լիբանանցի թղթակիցները Պարաքի շուրջ բողոքուեցան սովորականին նման անոր հարցումներ ուղղելու, յանկարծ Պարաք բարկանալով զանոնք նախատեց անասնական ու վայրենի վերաբերմունքով վարուելուն համար: Լիբանանեան տեղեկատուական դաշտը զայրոյթ արտայայտեց այս յայտարարութեան դէմ եւ պահանջեց որ ան ներողութիւն խնդրէ լիբանանեան մամուլէն: Օրին, Լիբանանի պաշտօնական մարմինները ցաւ յայտնած էին տոյն յայտարարութեան նկատմամբ: Պարզապէս Միջին Արեւելքի մէջ Իսրայէլի զինուորական գերադասութիւնն ու աշխարհի մէջ ԱՄՆ-ի գերազոյն ոյժերէն մէկը ըլլալու իրականութիւնը, այս քաղաքական պատասխանատուներուն անհամբեր մղում կու տան իրենք զիրենք գերադաս նկատելով լիտիանալու եւ ծայր աստիճան անբաղաքավար դառնալու, կարենալ շեշտելու համար իրենց պետութեանց գերադասութիւնը... լրբութեամբ:

Ու տակաւին ուրիշ հարց մը. Քաթարի մայրաքաղաք Տոհայի Համաս-Իսրայէլ պատուիրակութիւններու բանակցութեանց մասնակցող պաղեստինեան պատուիրակութեան կեդրոնին վրայ խրախէլեան օդային ռմբակոծումը, բնականաբար ոչ մէկ նախնական նշան կը կրէր: Այս պարագային անարգ գործողութիւնը կը կանխէր Իսրայէլի անօրէն կեցուածք-յայտարարութեան՝ «կրկին պիտի հարուածենք եթէ կարիքը զգանք» եւ «կրկին պիտի փորձենք հարուածել»: Գործողութիւնը ձախող էր սակայն վեց անմեղ զոհեր ինկած էին: Նախապէս Իսրայէլի կողմէ «Մեծն Իսրայէլի» ծրագրին կամ «Նոր Միջին Արեւելք» ծաւալապաշտական ծրագրին յայտարարութիւնները կատարուած էին, որոնք ցոյց կու տան Իսրայէլի նեց ու անօրէն կեցուածքը իր դրացիներուն նկատմամբ: Տոհայի վրայ ռմբակոծման յաջորդեց Իսրայէլ-Եգիպտոս լարուածութեան ծնունդը:



Տոհա - Համաս Պատուիրակութեան Ծեցը

Երբ պաղեստինեան եւ իսրայէլեան պատուիրակութիւնները արդէն Տոհայի մէջ կը պատրաստուէին բանակցութեանց, յանկարծ Իսրայէլ կը փորձէր հարուածել Պաղեստինեան Համասի պատուիրակներու կեդրոնը, անտեսելով ամէն միջազգային օրէնք կամ մարդկային պատշաճ մօտեցում: Այս կը նշանակէ թէ Իսրայէլ բացարձակապէս հետաքրքրուած չէ խաղաղութեան հաստատմամբ, այլ միակ նպատակ ունի պատերազմը շարունակելու եւ անմեղ զոհեր խլելու եւ իր տարածքները ընդարձակելու որոճացած ծրագիրները գործադրութեան դնելու:

Միւս կողմէ Թրամփի յանկարծ քաղաքական մթնոլորտը աւելի ես կը շիկացնէ՝ երբ կը պահանջէ իւրացնել Չինաստանի սահմանին մօտ, Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլէն 50 քմ. դէպի հիւսիս գտնուող Պաղրամ կոչուած զինուորական խարխիւր, որ կառուցուած էր Խորհրդային Միութեան ոյժերուն կողմէ երբ անոնք հոն էին եւ անոնց նահանջէն ետք անցած էր ամերիկացիներու ձեռքը: Ուշագրաւ է Թրամփի անօրէն յայտարարութիւնը Աֆղանիստանի իշխանութեան. «Եթէ չտաք այս խարխիւր, շատ վատ բաներ պիտի պատահին...»: Սպառնալիք մըն է այս, պարզապէս, որ կը բախի Թալիպան իշխանութեան մեծաւորին մերժումին: Ու տակաւին տոյն «երկխօսութիւնը» երկու բարեկամ ոյժերու միջեւ է: Ի՞նչ կը մնայ թշնամիներու միջեւ երկխօսութեանց... Թրամփ նպատակ ունի տոյն խարխիւր գործածել Չինաստանի եւ Իրանի դէմ ու ինչո՞ւ չէ՝ նաեւ Ռուսաստանի ...

Վերոյիշեալ դէպքերու եւ զարգացումներու լոյսին տակ կը տեսնենք, թէ աշխարհի գահավէժն ի վար կը սուրայ դէպի անորոշութիւն, պարզապէս միակողմանի հատուածական բռնազբօսիկութիւն հաստատուելու վերոնշեալներու անմարդկային ձգտումներուն իբր արդիւնք...:

Պէլլուր

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ՇԱՏ ԱՆԴԻՆ...

Ուրբաթ, 10 Հոկտեմբեր 2025-ի երեկոն վստահաբար պիտի մնայ անմոռանալի: Այդ գիշեր, ակնկալուածէն աւելի բազմամարդ էր ՀԲԸՄ-ի Տէմիրճեան Կեդրոնը եւ գրասէր ու մշակութասէր լայն հասարակութիւն մը փութացած էր վայելելու բացառիկ առիթը: Երեկոն ունէր մէկ անուն՝ «Շնորհահանդէս»... սակայն ան անցնելով սովորական շնորհահանդէսի սահմանները, դարձաւ արուեստի բարձրորակ շունչով յագեցած եզակի երեկոյ:

Շնորհահանդէսը կը վայելէր հովանաւորութիւնը ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տիար Ժէրար Թիւֆէնքճեանի, որուն ներկայ էր Լիբանանի բարեջան առաջնորդ՝ Տէր Շահէ արք. Փանոսեան: Ներկայ էին նաեւ՝ Տէր Մեսրոպ վրդ. Թօփալեան, Արժանապատիւ Տէր Սուրէն քին. Արսլանեան, ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի նոր ու նախկին անդամներ, Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ եւ վարչական անդամներ, Քոյր Միութիւններու ներկայացուցիչներ, ՀԲԸՄ-ի Կրթական Յանձնախումբի անդամներ, Միութեանականներ, Մտաւորականներ, Խմբագիրներ, Տնօրէններ, Արուեստագէտներ, եւ հոծ բազմութիւն մը:



Տէմիրճեան Կեդրոնի Բ.յարկի սրահը լեցուն էր ծայրէ ի ծայր՝ հայ գիրն ու գիրքը գնահատող հայորդիներով, որոնք եկած էին իրենց յարգանքն ու սէրը արտայայտելու լիբանանահայ բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, հրապարակագիր եւ հրապարակախօս Համբիկ Մարտիրոսեանին, անոր երեք գիրքերուն շնորհահանդէսին առթիւ:

Երեկոն սկսաւ ճիշդ ժամը 8:00-ին, ՀԲԸՄ-ի «Խօսնակ» Մշակութային Յանձնախումբի ժրջան անդամ, երիտասարդ մտաւորական Անտիա Տիպանի բացման խօսքով, ուր ան բունց երեկոյին կարեւորութիւնը, շեշտելով, թէ երեկոն իր ամբողջական բովանդակութեամբ նուիրուած է Թարգմանչաց տօնին:

Բացման խօսքին յաջորդեց գեղարուեստական յայտագրի գործադրութիւն, ուր հնչեց երիտասարդ, ինքնավստահ սաքսոֆոնահար Մարօ Մարտիրոսեանի յաջող նուագը՝ «Չքնաղ Երագ», որուն ընկերակցեցաւ եղբայրը՝ տաղանդաւոր դաշնակահար՝ Համբիկ Մարտիրոսեանը, բացառիկ նուագակցութեամբ, առաջին լուսէն գուարթացնելով երեկոն:

Գեղեցիկ ու առիւնքնող երաժշտութեան յաջորդեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի հիմնադիր Նախարար Տիպանի Հրանուշ Յակոբեանի սրտի ջերմ խօսքը, նուիրուած՝ բանաստեղծ Համբիկ Մարտիրոսեանի շնորհահանդէսին, զոր հաճելիօրէն, սահուն առողջանութեամբ ընթերցեց վարչականօրի Մարալ Արմէլեան: Տիպանի Յակոբեան իր խօսքին մէջ կ'անդրադառնար բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, հրապարակագիր եւ խմբավար Համբիկ Մարտիրոսեանի անձին, գործին, աւանդին եւ անոր վերջերս հրատարակած երեք գիրքերուն մասին, տալով յատուկ գնահատական:

Տիպանի Նախարարին խօսքէն ետք հանդէս եկան շնորհալի հայուհիներ, արուեստագէտ Արմէլեան քոյրեր՝ Նայիրին եւ Նանորը, առաջինը՝ շուիով, երկրորդը՝ ընկերացաւ իրեն դաշնամուրով եւ գեղեցիկ մեկնաբանութեամբ հրամցուցին Խաչատուր Անտիսեանի «Տաղ Յայտնութիւն»-ը, անթերիօրէն, արուեստի շունչով հմայելով ներկաները:



Չուարթ երաժշտութեան յաջորդեց գաղութիս նշանաւոր ասմունքողուի Անի Եփրեմեանի ազդեցիկ կատարումը: Ան, մեծ ապրումով, խոր ներշնչումով ու վառ յուզականութեամբ արտասանեց բանաստեղծ Համբիկ Մարտիրոսեանի «Եռաբլուր» անուն խորիմաստ բանաստեղծութիւնը, լաւագոյն տպաւորութիւն ձգելով ներկաներու վրան:

Յետ ասմունք, սրտի խօսքով հանդէս եկաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Հայագիտական Հիմնարկի տնօրէն՝ Ահարոն Շիւրքարմեան, որ անդրադարձաւ Համբիկ Մարտիրոսեանի կեանքի անցած երկար ճանապարհին, անոր Ազգային, Միութեանական, Եկեղեցական բնագաւառներէն ներս ունեցած բեղուն գործունէութեան, թուարկելով անոր ծառայութիւնները՝ որպէս ուսուցիչ, տնօրէն, դիւանապետ, խմբավար, ինչպէս նաեւ գրական ու լրագրական ասպարէզներէ ներս ունեցած ձեռքբերումները:

Ուշագրաւ էին եւ շատ տպաւորիչ, լիբանանահայ երգչուհի Միւրէյ Քիւրքիճեանի գոյգ երգերը՝ «Լարաբաղի Եղնիկ», գործ՝ Աշոտ Գրաշիի եւ «Ճիրանի Ծառը» անմահն Կոմիտասի: Երգչուհի Քիւրքիճեանի մեկնաբանութիւնը, ինչպէս միշտ, գնահատուեցաւ մեծապէս, երբ անոր աստուածատուր ձայնի մեղեդին կ'առիւնքներ արուեստասէր հասարակութիւնը: Անոր ընկերացաւ, մեր բեմերուն ծանօթ արուեստագիտուհի, փորձառու դաշնակահար՝ Մարալ Արմէլեան՝ վարպետութեամբ ու ճիշդ մեկնաբանութեամբ, գեղեցկացնելով պահը:

Կոմիտասի եղանակին ձգած հաճելի ունկնդրութեան յաջորդեց Լիբանանի «Ազգակ» օրաթերքի խմբագրապետ եւ տնօրէն, գաղութիս հանրածանօթ ներիւն մտաւորական Շահան Գանտահարեանի ելոյթը, երբ ան ծանրացաւ բանաստեղծ-արձակագիրին որպէս «Խօսնակ» պաշտօնաթերքի խմբագիր ունեցած բազմամեայ ծառայութեան (19 տարի) եւ թուարկեց անոր թէ՛ խմբագրականներուն եւ թէ՛ առանձին հրապարակագրութեան մէջ ունեցած խիզախ կեցուածքը, եւ իր իւրայատուկ տեսակէտները համարձակօրէն արտայայտելու եղանակը:

Պարոն Գանտահարեանի խորիմաստ ու բովանդակալից սրտի խօսքէն ետք բեմ բարձրացաւ գաղութիս ներս փայլող ասող, երիտասարդ ու շնորհալի դաշնակահար Համբիկ Մարտիրոսեանը եւ մեծ ապրումով նուագեց Brahms-ի Rhapsodie op 79 no. 2 -ն, ինքնավստահ ու ամենայն վարպետութեամբ, լեզու տալով դաշնամուրին եւ շահելով ակնդիրներուն համակրանքը:

Դաշնամուրային ելոյթէն ետք գեղեցիկ ու տպաւորիչ ասմունքով հանդէս եկաւ լիբանանահայ ասմունքողուի Լիանա Ամիրխանեան եւ հրամցուց Համբիկ Մարտիրոսեանի նորագոյն «Սիրէ՛ Հայն ու Հայաստան» անուն քերթուածը, նուիրուած՝ Արարատին, Էջմիածնին, Արցախին եւ Մեսրոպ Մաշտոցին: Ամիրխանեանին ասմունքը տոգորուն էր ապրումով ու հայրենասիրական հուրով, անթերի եւ յաջող:

Գեղարուեստական յայտագրի վերջին բաժնին մէջ իր սիրտ ու հոգի շոյող նուագով «Սաքսոֆոն» ներկաները հմայեց լիբանանահայ արիեստավարժ արուեստագէտ Գրիգոր Արմէլեան, որ հրամցուց «Aria for sax -Lorenzo pusceddu»-էն, հրաշալի համոյթ մը ծանելով ներկաներու տրամադրութիւններուն, որ գնահատուեցաւ եւ ծափահարուեցաւ երկար-երկար:

Գեղարուեստական յայտագրի աւարտին, իր սրտի խօսքը փոխանցեց գաղութիս շատ ծանօթ անձնաւորութիւն, Ազգային Քաղաքական ժողովի ատենապետ՝ Տիար Գրիգոր Արսլանեան, որ ծանրացաւ իր եւ բանաստեղծ Համբիկ Մարտիրոսեանի ունեցած երկար տարիներու ծանօթութեան, բարեկամութեան, անոր տարած միութեանաւոր եւ ազգանուէր ծառայութեան, եւ բազմաթիւ բնագաւառներէ ներս անոր արձանագրած յաջողութիւններուն մասին, առանձնացնելով ՀԲԸՄ-ի Ահրամճեան Կեդրոնը եւ հոն իրագործուող միջոցառումները, որոնց թիւը արդէն հասած է 155-ի:

Հնչած արտաբոլիս խօսքերէն եւ արուեստի որակաւոր ու բարձրամակարդակ մեկնաբանութիւններէն ետք բեմ բարձրացաւ «ՇՈՂԵՐԳ» Երգեցիկ Խումբը, խմբավարութեամբ Համբիկ Մարտիրոսեանի: «ՇՈՂԵՐԳ»-ի 10 հոգիանոց երգողներու խումբին կ'ընկերանար 4 հոգիանոց նուագախումբ, գլխաւորութեամբ՝ դաշնակահար Թորոս Հալաճեանի: Սրահի մէջ յաջորդաբար հնչեցին՝ «Երիտասարդական Քայլերգ», «Իմ սիրուն երկիր», «Հէյ ջան Երեւան», «Մենք ենք մեր սարերը», «Հարալօ», «Հոյ Նազան», «Նիւն», «Մարի ծաղիկ» եւ «Հայեր միացէք» երգերը, յաջողապէս, ստեղծելով մեծ խանդավառութիւն:

Երգեցիկ խումբի գլուարթութիւն ներշնչած մեղեդիներէն ետք, եկած էր Շնորհահանդէսի պահը: Համբիկ Մարտիրոսեանի հրաւրով բեմ բարձրացան Առաջնորդ Սրբազանը, եւ օրուան բանախօսները, Տիար՝ Շահան Գանտահարեանը, Ահարոն Շիւրքարմեանը եւ Գրիգոր Արսլանեանը: Տէր Շահէ արք. Փանոսեան, ի տես երեկոյի խայտաբղետ ու գունաւոր ներշնչանքին, գնահատեց կատարող միջոցառումը, յայտնեց իր ուրախութիւնը, եւ մաղթեց, որ շարունակական ըլլան նման պատուաբեր եւ ուրախացնող երեկոներ: Ապա Սրբազան հօր յատուր պատշաճօր օրհնաւրէն ետք կատարուեցաւ բանաստեղծ Համբիկ Մարտիրոսեանի երեք գիրքերուն «մկրտութիւնը», ուր Սրբազան հայրն ու օրուան բանախօսներ գինիով օծեցին՝ «Բաժակ մը սէր», «Կեանք ու կարօտ-Երագ ու Մէր» եւ «Նոր Հայերգութիւն» հատորները, ներկաներու հետաքրքիր մայումքներուն ու անդադրուն ծափերուն տակ:

Գիրքերու օծման արարողութենէն ետք տեղի ունեցաւ կարկանդակի հատում, որուն համար Առաջնորդ հօր կողքին բեմ հրաւիրուեցան ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի անդամներ՝ Տիպանի Սիլվա Լիպարիտեանը, Դոկտ. Դալար Աբէշեանը, Տիար Յակոբ Ծղղղեանը եւ Տիար Յակոբ Տանձիկեանը ու հանդիսաւորապէս կտրեցին երեք գիրքերու լուսանկարներով պատրաստուած շատ յատուկ ճաշակաւոր կարկանդակը:

Հանդիսութեան աւարտին, ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի անունով Տիպանի Սիլվա Լիպարիտեան յուշանուէր մը յանձնեց բանաստեղծ, «Խօսնակ» պաշտօնաթերքի խմբագիր Համբիկ Մարտիրոսեանին, անոր մաղթելով քաջառողջ եւ արեւշատ տարիներ:



Երբ խօսք, երգ, նըւագ դադրած էին, շնորհակալական խօսքով հանդէս եկաւ բանաստեղծ-խմբագիր Համբիկ Մարտիրոսեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Շնորհահանդէսի հովանաւոր, ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տիար Ժէրար Թիւֆէնքճեանին՝ իր բարձր հովանաւորութեան համար, Գերշ. Տէր Շահէ արք. Փանոսեանին, իր քանկագին ներկայութեան համար, օրուան սրտի խօսք առնող 4 բանախօսներուն, գեղարուեստական յայտագրի մասնակից բոլոր արուեստագէտ-արուեստագիտուհիներուն, օրուան յաջողութեան սատար հանդիսացած անձանց եւ մանաւանդ ներկայ ակնդիր ժողովուրդին, որոնք եկած էին յայտնելու իրենց սէրն ու յարգանքը:

Հայաբոյր հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ շնորհատրանք եւ հիւրասիրութիւն: Սակայն երեկոյեան ձգած տպաւորութիւնը անբացատրելի էր, ուր գիր, գիրք, երգ, նուագ, երաժշտութիւն թեւ առած կը ճախրէին եւ ներկաներու դէմքերուն կը ցոյլար ուրախութեան խօսուն ժպիտ: Ուրախ էին բոլորը, անխտիր: Շնորհահանդէսը հանդիսացած էր շնորհաբոյր, շնորհաբեր, շնորհաշատ եւ շնորհառատ...:

Երեկոն խլած անցած էր «Շնորհահանդէս» հասկացողութիւնը... քանզի այդ գիշեր հայ լեզուի շարունակուող կարկաջին համոյթն էր որ կը սաւառներ՝ հասնելու համար եթեր... երբ ներկաներ հոգեպէս ամրացած ու զօրացած էին՝ Արարատով... հզօրացած էին՝ Արցախով... ներշնչուած էին՝ Էջմիածնով եւ մկրտուած՝ Մաշտոցի աւագանին մէջ... երդուելով, պահելու մեծասքանչը եւ հպարտանալու անով ու հայկականութեամբ:

«ԽՕՍՆԱԿ» ԼՐԱՏՈՒ

ՀԲԸ Միութեան Վարժարաններ

ՎԱՐՎԿԻՉ ԵՌՆԶՈՎ ԵՒ ՈԳԻՈՎ ՆՇՈՒԵՑԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Հայաստանի հանրապետության 34րդ տարեդարձը, ինչպես այլոց, մեր վարժարաններում աշակերտության մօտ ալ ստեղծած է անսահման խանդավառություն ու հայարտություն:

Գիտակցում է այդ վերաբերմունքը, որովհետև՝ ծնողներու կողքին, մեր աշակերտությունը միշտ եւ ամէն առիթով, ականջալուր կ'ըլլայ հայրենիքի անկախութեան մասին եւ անոր կառչելու ու զայն պահելու հրամայականներուն վրայ:



Այս տարի եւս, նման հոգեպարար ու զգայացումը պահեր ապրեցաւ մեր աշակերտությունը, երբ, Երեքշաբթի 23 Սեպտեմբեր 2025-ին, անհամբեր կը սպասէր այդ նուիրական տարեդարձը նշելու:

Հայրենի օրհներգը յոտընկալա երգելէ ետք, Տնօրէն Պրն. Արա Վասիլեան ներկայացուց անկախութեան տօնին քանկարժէքութեան անփոխարինելիութիւնը եւ շեշտ դրաւ անոր ընձեռած հոգեհարազատութեան վրայ, ապա, տեսերիզներու վրայ ցուցադրեց այն հանգրուաններն ու պայմանները, որոնցմէ ծնունդ առաւ ու կազմակերպուեցաւ ան, դառնալով ճշմարիտ իրա-



կանութիւն մը, յատկապէս համաժողովրդային հանրաքուէի բացարձակ մեծամասնութեամբ, իսկ 21 Սեպտեմբեր 1991-ին, հռչակելով որպէս լիիրաւ անկախութեան պիտոյեան մը, ժողովուրդին ցնծախինդ ու բուռն ծափահարութիւններու տարափին տակ, որուն մասնակցեցաւ նաեւ մեր աշակերտութիւնը ... հեռակայ կարգով, բայց սրտագին ներքին արտայայտութիւններով:

Յիշեցնենք թէ՛ առ այդ, մեր աշակերտները (Մեակ Պուլոս, Մելինա Շամլեան եւ Մաթէօ Ապաշեան), մեծ ոգեւորութեամբ ընթերցեցին անկախութեան հռչակագիրին բովանդակութիւնը, որ դարձեալ ընդունուեցաւ ողջոյններով, մինչ, Պրն. Արա, անդրադարձաւ անոր գլխաւոր կէտերուն, համապատասխան բացատրութիւններով ու լուսաբանութիւններով:



Աւարտին, Պրն. Տնօրէնը հրաւիրեց Պրն. Պարոյր Աղապշեանը, հանդէս գալու սրտի խօսքով: Ան, շեշտը դրաւ անկախութեան հասկացողութեան վրայ, պատմականօրէն թէ հեռանկարօրէն, ոչ միայն զայն յաւերժացնելու կամքով, այլ՝ ոգեւին ամրացնելու, զօրակցելու եւ արդիւնաւորելու տեսիլքով, այդ պարտականութեան մէջ նոր սերունդը եւս ունենալով իր արժանի մասնակցութիւնը, կոչ ընելով անկախութեան երթը միշտ պահելու կանգուն ու կենդանի:

Թ.



ԼԱՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻԱԽԲԻՅ

Եկել ենք երկար սպասում ճորութեամբ կիսուելու:

Գորիսի երկրորդ Թումօ տուփը պաշտօնապէս ֆինանսաւորուած է:

Այս կարեւորագոյն ձեռքբերումը հնարաւոր է դարձել ամերիկահայ ուսանողների միութեան (ALL-ASA) անսպառ վճարականութեան եւ Rev and Rachel հիմնադրամի նուիրումութեան շնորհիւ: Գալիֆորնիայի տարբեր բուհերում սովորող հայ ուսանողներին սինիքցի պատանիներին նորարարական կրթութեամբ ապահովելու գաղափարի շուրջ համախմբելով՝ ALL-ASA-ն Գորիսի երկրորդ տուփի համար հաւաքել է \$30,000, իսկ Rev and Rachel հիմնադրամն առատաձեռնօրէն տրամադրել է տուփի բացման համար անհրաժեշտ մնացեալ ամբողջ գումարն ու իրականութիւն դարձրել այս կարեւորագոյն նպատակը:



Ահա, թէ ինչպէս է մեր աջակիցների նուիրումութիւնը իրական փոփոխութիւններ բերում Հայաստանի հէնց այն համայնքներում, որտեղ դրա կարիքն ամենաշատը կայ:

Գորիսի երկրորդ Թումօ տուփն ինքնին ապացոյց է նրա, թէ որքան անհրաժեշտ եւ սպասում է բունոյական կրթութիւնն այստեղ: Զաղաքի առաջին Թումօ տուփում սովորելու համար գրանցուել էին գրեթէ երկու անգամ աւելի շատ պատանիներ, քան մէկ տուփը կարող էր սպասարկել: Որպէսզի անգամ մէկ պատանի դուրս չմնայ Թումոյից, որոշեցինք գործարկել եւս մէկ Թումօ տուփ՝ այս անգամ քաղաքի միւս ծայրում:

Գորիսի եւ շրջակայ գիւղերի համար այս Թումօ տուփը նշանակում է նոր կրթական հնարաւորութիւններ, որոնք երիտասարդներին կը պահեն Միւնիքում եւ կը նուազեցնեն տաղանդի արտահոսքը:

Իւրաքանչիւր Թումօ տուփ իրենից ներկայացնում է անհրաժեշտ բոլոր տեխնոլոգիաներով զինուած ժամանակակից կրթական միջավայր, որտեղ Թումոյի՝ կեանքեր փոխող կրթութիւնը հասանելի է դառնում շաբաթական մինչեւ 400 պատանիներին:



Միւնիքի պատանիների համար Թումօ տուփն աւելին է, քան պարզապէս կրթական տարածք: Սա սեփական ապագան սեփական տանը պատկերացնելու հնարաւորութիւն է:

Գորիսի երկրորդ Թումօ տուփը եւս մէկ ապացոյց է, որ անհնարին ոչինչ չկայ, երբ աշխատում ենք միասին: Դարձէ՛ք Թումօ Հայաստան արշալի մի մասը: Եկէ՛ք միասին Թումօն հասանելի դարձնենք Հայաստանի բոլոր պատանիների համար:

Նիւ Ճըրգի
ՄԳ ՅՈՎՆԱՆԵՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՌՕՐԵԱՅԷՆ
Աշակերտի Անկիւն

2025-26 տարեշրջանի առաջին ամիսը խանդավառութեամբ լեցուն է թէ՛ աշակերտներու համար եւ թէ՛ ուսուցիչներուն: Նոր տարի, նոր դէմքեր, նոր աշխուժութիւն եւ նոր ծրագիրներ: Աշակերտներն ու ուսուցիչները արդէն մտած են հունի մէջ: Շատ ուրախ ենք, որ մեր դպրոցական ծրագրին մէջ մուտք գործած են նորութիւններ, ինչպէս՝ Սպաներէն խօսակցական պահ, զեկոյցի, ճատրակի, համակարգիչի եւ այլ հետաքրքրական դասապահեր, որոնք մեծ հաճոյքով կը վայելենք: Այս բոլորին կողքին հաճելի եւ ուրախ ժամանակ կ'անցընենք մեր ընկերներուն հետ: Կը յուսանք, որ ամբողջ տարեշրջանը ստրվելով, խաղալով, գումարճանալով եւ յաջողութեամբ կ'ընթանայ:



BAIKAR Շաբաթաթերթ

www.baikarweekly.com



ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
Ամերիկայի Հայ Առետարանչական Ընկերակցութիւն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՒԱՆԻ ՇՈՂԻԿ ԶԱՄԲԱՐԻ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԲԱՅՈՒՄԸ

Երեւան, Հայաստան – Ամերիկայի Հայ Առետարանչական Ընկերակցութիւնը կիրակի, 28 Սեպտեմբեր 2025-ին, Հայաստանի Հանգաւանի Շողիկ ճամբարի սրահին մէջ կատարեց իր նորոգումը Համալիքի նուիրման պաշտամունքը: Արարողութեան ներկայ էին բարերարներ, Առետարանչականի ղեկավարներ Միացեալ Նահանգներէն՝ ներառեալ Գործադիր Տնօրէն Մերթ Տ. Պուչպքեան եւ Վարչութեան Նախագահ Իրաւաբան Կերի Ֆիլիպս, ինչպէս նաեւ Հայաստանեայց Առետարանական Եկեղեցիի անդամներ Երեւանէն եւ այլ քաղաքներէ:



Հանգաւանի Շողիկ ճամբար

կան Եկեղեցիի (ՀԱԵ) Առագ Հովիւ Վեր. Աւետիք Խաչատրեանի, ՀԱԵ Խորհուրդի Նախագահ Վեր. Վարդան Աբինյանի եւ Երասիոյ Հայ Առետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ Վեր. Դոկտ. Ռընէ Լետմեանի:

Աւտարալիոյ Հայ Առետարանչական Ընկերակցութեան Նախագահ Վեր. Դոկտ. Գրիգոր Եւմէնտեան մատուցեց օրում պատգամը «Նուիրում Աստուծոյ» խորագրով, հիմնումը Աստուածաշունչի Յեսու գիրքի 3. 5 համարին վրայ, յիշեցնելով ներկաներուն, որ ճամբարին առաքելութիւնը Աստուծոյ է եւ պէտք է մնայ Քրիստոսակեդրոն: «Ճամբարները կու գան ու կ'երթան, շէնքերը կը քայքայուին, ծրարները կը փոխուին, բայց Աստուծոյ գործը կը շարունակուի հաւատարիմ եւ նուիրեալ սրտերու միջոցով», ըսաւ ան:



Հանգաւանի Շողիկ ճամբարի Նուիրման Պաշտամունք

Ճամբարի նուիրման արարողութիւնը կատարեց Վեր. Դոկտ. Յարութիւն Սելիմեան, Մուրիոյ Հայ Առետարանական Համայնքի Նախագահը, որ պաշտօնապէս առանձնացուց ճամբարը՝ «Ամենակալ Աստուծոյ պաշտամունքի եւ ծառայութեան համար»: Իսկ ներկաները միաձայն պատասխանեցին. «Կը նուիրենք այս հողը Աստուծոյ՝ Իր փառքին եւ ծառայութեան համար»:

Պաշտամունքէն ետք, ներկաներուն միացան ՀՀ Էքոնոմիքայի Նախարար Գեորգ Պապոյանը, ՀՀ Աշխատանքի եւ Սոցիալական Հարցերու Նախարար Արսէն Թորոսեանը, ՀՀ Սփիւրքի Գործերու Գլխաւոր Յանձնակատար Զարեհ Սիմանեանը եւ ՀՀ Վարչապետի Գլխաւոր Խորհրդական Լիլիթ Մակունցը, որոնք մասնակցեցան ժապաւէնը կարելու արարողութեան եւ յաջորդող յատուկ յայտագրին:

Առետարանչականի Հայաստանի Ներկայացուցիչ Արէն Տէյրմէնճեան իր շնորհակալութիւնը յայտնեց բոլոր բարերարներուն՝ նշելով, որ վերանորոգումը համալիքը վկայութիւն է Ընկերակցութեան անսասան առաքելութեան՝ հաւատքի, կրթութեան եւ ծառայութեան ամրապնդման Հայաստանի մէջ:

Առետարանչականի Վարչական Խորհուրդի Նախագահ Իրաւաբան Կերի Ֆիլիպս անդրադառնալով վերանորոգումը ճամբարի վերաբացումին, նշեց. «Ճամբարը այն վայրն է, ուր մանուկներն ու երիտասարդները կը հանդիպին Քրիստոսին, կը կազմեն մշտական բարեկամութիւններ եւ սկսին հաւատքի ու ծառայութեան կեանք մը», աւելցնելով, որ Հանգաւանի ճամբարի վերանորոգութիւնը կը վերահաստատէ Առետարանչականի առաքելութիւնը՝ «կերտել կեանքեր Քրիստոսի վրայ հիմնուած՝ դաստիարակելով սրտեր, ձեւաւորելով նկարագիրներ եւ պատրաստելով նոր սերունդներ՝ իրենց հաւատքը ապրելու Հայաստանի մէջ եւ անոր սահմաններէն անդին»:

Իր խօսքին մէջ Առետարանչականի Գործադիր Տնօրէն Մերթ Տ. Պուչպքեան ընդգծեց Առետարանչականի խոր նուիրումութիւնը Հայրենիքին հանդէպ՝ ըսելով. «Ասիկա այն հողն է, ուրկէ սկիզբ առին մեր նախահայրերը, եւ այն տունը՝ դէպի ուր մեր սիրտն ու հոգին անդադար կ'ուղղուին: Եւ այստեղ՝ Հայրենիքին մէջ, մենք ամենէն խորունկ պատասխանատւութիւնը կը զգանք՝ զօրացընելու մեր ժողովուրդին ապագան եւ նոր կարելիութիւններ տալու գալիք սերունդներուն»:

Յայտագիրը իր արտին հասաւ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներու գնահատանքի խօսքերով՝ արտայայտելով իրենց երախտագիտութիւնը Առետարանչականի մշտական ազդեցութեան համար հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Մեր Առետարագէտները - 443

ԾԱՐԼ ԱՂԱՄԵԱՆ

Օսմանեան կայսրութեան մէջ եղած են հայ եւ ծագումով հայ գեղանկարիչներու բազում անուններ, որոնք իրենց մշակութային ժառանգութիւնը ձգած են համայնքի, կայսրութեան եւ նաեւ՝ համաշխարհային արւեստի պատմութեան մէջ, սակայն ժամանակի ընթացքին անոնց շատերուն անունները աստիճանաբար մոռացութեան ուղին բռնած են: Հակառակ այն բանին, որ այդ նկարիչներու ստեղծագործութիւնները հիմնականօրէն պահպանուած եւ ցուցադրուած են աշխարհի զանազան թանգարաններու մէջ, հայ մշակութային հանրութեան եւ աշխարհասփիւռ հայերու տեսողաշտէն շատերը կարծես անհետացած են:

Օսմանեան կայսրութեան հայ գեղանկարիչները միայն զբաղած չէին գեղեցիկ պատկերներ գծելով, անոնց մէկ մասը նաեւ իրենց դարաշրջանի մշակութային շարժումներու մաս կազմած է եւ մեծ ազդեցութիւն ձգած՝ նոր գաղափարներ եւ տեսլականներ բերելով աւանդական միջավայրերու եւ արքունիքին մէջ:

Ծարլ (Կարապետ) Աղամեան նոյնպէս Պոլիս ծնած եւ Ֆրանսա հաստատուած նկարիչ մըն է: Ան 1872 թուականին ծնած է Պոլիս: Իր կրթութիւնը ստացած է Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ, հետեւած է նկարչութեան:

Յաճախած է Վենետիկի Գեղարւեստական ակադեմիան, սակայն, առանց աստիճան վերադարձած է Պոլիս: 1895 թուականի դէպքերու նախօրեակին կազմակերպած է իր նկարներու առաջին ցուցահանդէսը, որ անցած է աննկատ, քաղաքական ծանր մթնոլորտին պատճառով:

1897 թուականին մեկնած է Փարիզ, զբաղած է գիրքերու նկարագրողմով՝ մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի տարիները:



Նկարագրողած է աւելի քան հարիւր յիսուն ֆրանսերէն գիրքեր, այդ կարգին՝ Անաթոլ Ֆրանսի, Կիտր Մոփասանի վէպերը: Հրապարակած է հայ ժողովուրդի ազատագրական պայքարին նուիրած զծանկարչական գործեր: Նոյն-

պէս նկարագրողած է «Պոմպէի վերջին օրերը» գիրքի ֆրանսերէն մէկ բարգմանութիւնը: Աշխատակցած է ֆրանսական «Իլլուստրասիոն», «Լը մոնտ իլլուստրէ» եւ այլ պարբերականներու: 1903 թուականէն սկսեալ, պարբերաբար մասնակցած է Փարիզի «Նասիոնալ» գեղարուեստական ընկերութեան տարեկան ցուցահանդէսներուն՝ բնանկարներով, դիմանկարներով եւ այլն:

1927 թուականին եղած է այդ ընկերութեան անդամ: Անոր նկարները ցուցադրուած են Եւրոպայէն մինչեւ Ամերիկա, ճաբոն եւ այլուր: Անհատական ցուցահանդէսներ ունեցած է Պոլիս, Փարիզ, Պրիքսէլ, Սթրազպուրկ:

Գործերէն մաս մը կը պահուին Փարիզի Լիքսեմպուրկի եւ այլ թանգարաններու, Հայաստանի Ազգային պատկերասրահին մէջ:

Ստեղծած է ծովային տեսարաններ («Ծովափին» (1910), «Ալիքներ», «Ալջնակը ծովափին», «Կիւր ծովափին», «Ծովափնայ տեսարան», «Լոդափին (հեղինակին թոռնիկը)» բոլորը՝ Հայաստանի Ազգային պատկերասրահին մէջ են), ազդագրեր ալ նկարած է: Ծարլ Աղամեան կը դասուի բնանկարի հայ վարպետներու շարքին: Ան 1947 թուականին մահացած է Փարիզ մէջ:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՅ

դէպ՝ ըսելով. «Ասիկա այն հողն է, ուրկէ սկիզբ առին մեր նախահայրերը, եւ այն տունը՝ դէպի ուր մեր սիրտն ու հոգին անդադար կ'ուղղուին: Եւ այստեղ՝ Հայրենիքին մէջ, մենք ամենէն խորունկ պատասխանատւութիւնը կը զգանք՝ զօրացընելու մեր ժողովուրդին ապագան եւ նոր կարելիութիւններ տալու գալիք սերունդներուն»:



Ներկայ Զիւրեր Վերանորոգում ճամբարի յատուկ Յայտագրին

Յայտագիրը իր արտին հասաւ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներու գնահատանքի խօսքերով՝ արտայայտելով իրենց երախտագիտութիւնը Առետարանչականի մշտական ազդեցութեան համար հայ ժողովուրդի կեանքին մէջ: